ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ
ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

«ԼԻԳԼ ԸԼԱՅԸՆՍ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

# «ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ. ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

## ԻՐԱՎԱԲԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՎԵՑԵՐՈՐԴ
ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան-2010

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*ՍՅՈՒԶԱՆՆԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ*
Նախաբան ---------- 5

*ՄԱՐԻԱՆՆԱ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ*
Ներածություն ----------
*Փաստաբանություն. ներկա վիճակը և*
*զարգացման հեռանկարը ՀՀ-ում* ----------
*Զարգացման հեռանկարը* ----------
Եզրափակիչ մաս ----------
Օգտագործված գրականության ցանկ ----------

*ՄԱՐԻՆԵ ՔՈՉԱՐՅԱՆ*
Ներածություն ----------
*Փաստաբանության զարգացման պատմությունը* ----------
*Փաստաբանական գործունեության արտոնագրումը* ----------
*Հանրային պաշտպանության հասկացությունը* ----------
Եզրափակիչ մաս ----------
Օգտագործված գրականության ցանկ ----------

*ՏԱԹԵՎԻԿ ԴԱԼԼԱՔՅԱՆ*
Ներածություն ----------
*«Դատական ներկայացուցչություն» ինստիտուտի*
*պատմական զարգացումը* ----------
*Փաստաբանի՝ որպես ներկայացուցչի դերը քաղաքացիական*
*դատավարությունում* ----------
Եզրափակիչ մաս ----------
Օգտագործված գրականության ցանկ ----------

*ԼՈՒՍԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ*
Ներածություն ----------
*Փաստաբանության և փաստաբանական գործունեության*
*էությունը, նպատակները և խնդիրները* ----------

*Փաստաբանի իրավական կարգավիճակը* ----------
*Իրավունքի էթիկայի հասկացությունը: Փաստաբանի մասնագիտական էթիկայի հասկացությունը և սկզբունքները* ----------
*Փաստաբանության զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում* ----------
Եզրափակիչ մաս ----------
Օգտագործված գրականության ցանկ ----------

*ՍԻՐՈՒՇ ՄՈՒՐԱԴՅԱՆ*
Ներածություն ----------
Նկարագրական Մաս ----------
Եզրափակիչ մաս ----------
Օգտագործված գրականության ցանկ ----------

# ՆԱԽԱԲԱՆ

Փաստաբանությունը հանդիսանում է այն հիմնական միջոցը, որի շնորհիվ պահպանվում է հավասարակշռությունը և օրինականությունը՝ հասարակության, պետության և անձանց շահերի միջև: «Փաստաբանության մասին» ՀՀ նոր օրենքը վերջնականապես սահմանեց փաստաբանության նոր ձևակերպումը որպես քաղաքացիական հասարակության նոր ինստիտուտ, ըստ որի այն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն ուղղված է իրավաբանական օգնություն ստացողի հետապնդած շահերի իրականացմանը՝ օրենքով չարգելված միջոցներով և եղանակներով:

Հայաստանի Հանրապետությունում շուրջ 86 տարի է, ինչ գործում է փաստաբանության ինստիտուտը: Այն ձևականորեն ստեղծված ինստիտուտ կամ պետական համակարգի մի մաս չէ և երբևէ չի էլ եղել: Եվ չնայած այն հանգամանքին, որ փաստաբանությունը չի ներառվում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգում, այնուամենայնիվ, նրան վերագրվող խնդիրներն ունեն պետական նշանակություն և արտահայտում են հասարակության հանրային շահը: Վերջինիս ստեղծումը պայմանավորված է եղել մի շարք գործոններով, այդ թվում նաև՝ հասարակության կարծիքով, ինչը ժամանակի ընթացքում վերածվել է պահանջի, և հիմք հանդիսացել փաստաբանության ձևավորման և զարգացման համար: Հետևապես, անհնար է թերագնահատել փաստաբանության դերն ու նշանակությունը հասարակության յուրաքանչյուր անդամի համար:

Փաստաբանությունը կոչված է ծառայելու քաղաքացիական հասարակությանը, որի միջոցով աջակցում է արդարադատության իրականացմանը, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությանը: Հենց սրանում է, ըստ էության, կայանում փաստաբանության հիմնական խնդիրը, որը նվաճվում է որոշակի իրավական մեխանիզմների միջոցով, նկատի ունենալով, որ մարդու արժանապատվությունը, իրավունքներն ու ազատությունները բարձրագույն արժեքներ են:

Փաստաբանության գործունեության զարգացման համար, անշուշտ, մեծ կարևորություն է տրվում նոր սերնդի երիտասարդ իրավաբանների՝ որպես ապագա փաստաբանների, կրթության և զագացման գործին, որի դժվարին պարտականությունը այսօր ստանձնել են մի շարք կրթական հաստատություններ ու քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ:

2009թ.-ի նոյեմբերի 27-ին Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի կենտրոնական գրասենյակում տեղի ունեցավ Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի, Հայաստանի իրավաբանական հիմնադրամի և «ԼԻԳԼ ԸԼԱՅԸՆՍ» իրավաբանա-

կան ընկերության կողմից կազմակերպվող «Փաստաբանություն. ներկա վիճակը և զարգացման հեռանկարները ՀՀ-ում» թեմայով իրավաբան ուսանողների հանրապետական վեցերորդ գիտաժողովի բանավոր փուլը: Գիտաժողովի հովանավորն էր հոլանդական Օքսֆամ Նովիբ կազմակերպությունը (Oxfam Novib):

Այս ամբողջ վեց տարիների ընթացքում կազմակերպվող և արդեն ավանդույթ դարձած գիտաժողովն ունի մեկ նպատակ. փաստաբանության ոլորտում բարձրացնել իրավաբան ուսանողների գիտելիքների մակարդակը, ապահովել նրանց մասնակցությունը փաստաբանական ինստիտուտի կայացման գործընթացում, խրախուսել նրանց կողմից լուրջ ուսումնասիրությունների իրականացումը, նպաստել ՀՀ-ում փաստաբանական ինստիտուտի դերի բարձրացմանը, ինչպես նաև թույլ տալ լսել նոր գաղափարներ և լուծումներ, որոնք առաջարկվում են նոր սերնդի երիտասարդ իրավաբանների կողմից:

Գիտաժողովը բաղկացած էր 2 փուլից՝ գրավոր և բանավոր: Գիտաժողովին մասնակցելու հայտ էին ներկայացրել 49 ուսանողներ՝ Երևանից և ՀՀ մարզերի իրավաբանական բուհերից և բուհերի իրավաբանական ֆակուլտետներից: Գիտաժողովի գրավոր փուլին մասնակցեցին սահմանված ժամկետներում կազմակերպիչներին իրենց զեկույցները ներկայացրած 23 իրավաբան ուսանողներ: Ներկայացված 5 լավագույն աշխատանքների հեղինակներին իրավունք ընձեռնվեց մասնակցել բանավոր փուլին, որի ընթացքում ներկայացրեցին իրենց զեկույցները: Զեկուցողները բանավոր փուլի ընթացքում ներկայացրեցին իրենց աշխատանքները, որոնցում անդրադարձել էին փաստաբանական ինստիտուտին, գործող օրենսդրությանը, վեր էին հանել դաշտում առկա թերություններն ու բացթողումները՝ միաժամանակ առաջարկելով իրենց լուծման հնարավոր տարբերակներն առաջ քաշված հարցերի շուրջ, և կատարել էին համեմատական վերլուծություններ արտասահմանյան և ՀՀ փաստաբանական ինստիտուտներում առկա հիմնախնդիրների շուրջ: Երիտասարդ իրավաբանների ելույթները գնահատվում էին հեղինակավոր փաստաբաններից կազմված ժյուրիի կողմից, որոնց թվում էին փաստաբաններ՝ Կարեն Զադոյանը, Վրեժ Գասպարյանը, Արթուր Գրիգորյանը և Տիգրան Աթանեսյանը:

«Փաստաբանություն. ներկա վիճակը և զարգացման հեռանկարները ՀՀ-ում» թեմայով իրավաբան ուսանողների հանրապետական վեցերորդ գիտաժողովի բանավոր փուլի արդյունքների ամփոփման արդյունքում «Լավագույն գրավոր զեկույց» մրցանակին արժանացավ Մենեջմենթի համալսարանի Գյումրու կրթահամալիրի 4-րդ կուրսի ուսանողուհի Սիրուշ Մուրադյանը: Գիտաժողովի երրորդ մրցանակին արժանացավ Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի Տաթևիկ Դալլաքյանը:

Եղեգնաձորի «Գիտելիք» համալսարանի երրորդ կուրսի ուսանողուհի Մարինե Քոչարյանը արժանացավ երկրորդ մրցանակին: ՀԵԻԱ-ի նախագահ Կարեն Զաղոյանի կողմից սահմանված հատուկ մրցանակին այս տարի արժանացան միաժամանակ երկու մասնակիցներ՝ Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի Տաթևիկ Դալլաքյանը և Գավառի Պետական Համալսարանի 4-րդ կուրսի ուսանողուհի Լուսինե Մանուկյանը: Իսկ գիտաժողովի հաղթող և լավագույն հռետոր ճանաչվեց Հայաստանում Ֆրանսիական համալսարանի 3-րդ կուրսի ուսանողուհի Մարիաննա Առուստամյանը:

Գիտաժողովի հաղթողները ստացան արժեքավոր մրցանակներ և համապատասխան հավաստագրեր: Գրավոր փուլի մյուս մասնակիցները ևս արժանացան մասնակցության հավաստագրերի:

Սույն գրքույկում ներառված են գիտաժողովի բանավոր փուլի մրցանակային տեղեր զբաղեցրած բոլոր մասնակիցների զեկույցները: Նախատեսվում է այս ժողովածուն անվճար տրամադրել իրավաբանական ֆակուլտետների գրադարաններին, ինչպես նաև անվճար տարածել իրավաբան ուսանողների, իրավաբանությամբ հետաքրքրվող անձանց և շահագրգիռ կառույցների շրջանում:

**Սյուզաննա Սողոմոնյան**
*Հայաստանի երիտասարդ իրավաբանների*
*ասոցիացիայի անդամ, իրավաբան*

*ՄԱՐԻԱՆՆԱ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ*

# Ներածություն

Փաստաբանության ծագումնաբանությունն այնքան հին է, ինչքան դատավարության կոչումը: Ինչպես դատավարությունը, այնպես էլ փաստաբանությունն իրենից ներկայացնում է հասարակական պաշտոն, որի հիմնական խնդիրը կայանում է մարդու իրավունքների պաշտպանությունը: Սակայն պետք է նշել, որ դատավորը դատական իշխանության թևի գործառույթների իրականացնողը հանդիսանալով, այդ իրավունքները պաշտպանում է պետական իշխանության ուժով, իսկ փաստաբանն օգնում է դատավորին արդարադատություն իրականացնելիս ճիշտ կողմնորոշվել փաստերը իրավունքի հետ համադրելիս:

Փաստաբանությունը կոչված է հասարակության, պետության և անձանց շահերի հավասարակշռմանը և օրինականության պահպանմանը: Փաստաբանությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն ուղղված է իրավաբանական օգնություն ստացողի հետապնդած օրինական շահերի իրականացմանը՝ օրենքով չարգելված միջոցներով և եղանակներով: Հենց այս ելակետային գաղափարներից էլ բխում են փաստաբանության հիմնական նպատակները, որոնք անհրաժեշտ են ժողովրդավարական և իրավական պետության մեջ մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանությանը՝ որպես բարձրագույն արժեք:

## Փաստաբանություն. ներկա վիճակը և զարգացման հեռանկարը ՀՀ-ում

Փաստաբանությունը փաստաբանների մասնագիտական միավորում է, որը հանդիսանալով քաղաքացիական հասարակության ինստիտուտ, չի մտնում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգի մեջ: Փաստաբանությունը գործում է անկախության, օրինականության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության սկզբունքների հիման վրա («Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդված):

Փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն ուղղված է իրավաբանական օգնություն ստացողի հետապնդած օրինական շահերի իրականացմանը՝ օրենքով չարգելված միջոցներով և եղանակներով:

Փաստաբանական գործունեությունը ներառում է՝

1. խորհրդատվությունը, ներառյալ՝ վստահորդներին խորհրդատվություն տրամադրելը, նրանց իրավունքների և պարտավորությունների, դատական համակարգի՝ վստահորդի իրավունքներին առնչվող գործունեության կապակցությամբ, փաստաթղթերի ուսումնասիրումը, իրավաբանական բնույթի այլ փաստաթղթերի կազմումը.
2. ներկայացուցչությունը, ներառյալ՝ դատական ներկայացուցչությունը.
3. քրեական գործերով պաշտպանությունը:

Դատական ներկայացուցչությունը կամ քրեական գործերով պաշտպանությունը՝ որպես ձեռնարկատիրական գործունեություն, իրականացնում է միայն փաստաբանը:

Փաստաբանության հիմնական նպատակներն են՝

- քաղաքացիական հասարակության և իրավունքի գերակայության ամրապնդումը.
- վստահորդների շահերի պաշտպանությունը, նրանց որակյալ իրավաբանական օգնության տրամադրումը:

Փաստաբանն իրավունք ունի փոխհատուցում ստանալ իր ծառայությունների դիմաց:

Փաստաբանական գործունեության վճարի չափն ու վճարման կարգը որոշվում են փաստաբանի ու վստահորդի միջև ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով կնքված գրավոր պայմանագրով: Պետությունը երաշխավորում է անվճար իրավաբանական օգնությունը քրեական գործերով՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և նախատեսված դեպքերում, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և հետևյալ դեպքերում՝

1. ալիմենտի գանձման վերաբերյալ գործերով.
2. խեղման կամ առողջությանն այլ վնաս պատճառելու, ինչպես նաև կերակրողի մահվան հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման վերաբերյալ գործերով:

Անվճար իրավաբանական օգնությունն ապահովում է փաստաբանների պալատը պետության հաշվին՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 41-րդ և 42-րդ հոդվածներով սահմանված կարգով: Անվճար իրավաբանական օգնություն կարող է ցույց տրվել նաև փաստաբանի նախաձեռնությամբ: Վերոնշյալ օրենքի 41-րդ հոդվածը վերաբերում է հանրային պաշտպանությանը:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ փաստաբան է համարվում այն անձը, որը օրենքով սահմանված կարգով ստացել է փաստաբանական գործունեություն իրականացնելու արտոնագիր, փաստաբանների պալատի անդամ է և տվել է երդում:

Փաստաբանը համարվում է իրավական հարցերով անկախ խորհրդատու: Փաստաբանն աջակցում է հասարակության մեջ իրավունքի գերակայության ամրապնդմանը, իրականացնում է օրինականության քարոզչություն՝ մարդու իրավունքներն ու ազատությունները հարգելու և միջազգային հանրաճանաչ նորմերը ամրապնդելու ուղղությամբ: Քաղաքացիական և քրեական դատավարությունում, ինչպես նաև վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթում փաստաբանն ունի որոշակի իրավունքներ և պարտականություններ: Փաստաբանը իր իրավունքներն իրականացնելիս պետք է ունենա գործունեության իրավական երաշխիքներ: Փաստաբանի գործունեության երաշխիքները կարևոր հենք և նախապայման են հանդիսանում իրենց գործառույթներն իրականացնելիս:

Փաստաբանն իր գործունեությունն իրականացնելիս անկախ է, ղեկավարվում է միայն ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով, փաստաբանի վարքագծի կանոնագրքով և փաստաբանների պալատի կանոնադրությամբ:

Արգելվում է պետական և ինքնակառավարման մարմիններին, պաշտոնատար անձանց, կուսակցությունների և հասարակական միավորումների, ՁԼՄ-ների միջամտությունը փաստաբանական գործունեությանը:

Այս իրավական երաշխիքներն ապահովում են փաստաբանի գործունեության անկախությունը, օրինականությունը և համապատասխանությունը ՀՀ իրավական համակարգին: Փաստաբանը հաշվետու չէ իր գործողությունների համար որևէ պետական մարմնի: Փաստաբանի գործունեությունը պետք է համապատասխանի օրենքի տառին՝ դուրս չգալով դրա սահմաններից: Փաստաբանը պետք է ապահովվի իր վստահորդի հետ առանձին, անարգել, մեկուսի հաղորդակցվելու, խորհրդատվություն տրամադրելու հնարավորությամբ: Այս նորմը կարևոր և հիմնարար երաշխիք է կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքի պրոֆեսիոնալ իրականացման համար: Փաստաբանի ներկայությամբ պաշտպանությունը դրվում է մասնագիտական բարձր հիմքի վրա և ապահովում է դրա արդյունավետությունը:

ՀՀ իրավական համակարգում կան ինչպես իրավական ամուր և հստակ երաշխիքներ, որոնք ելնում են մրցակցության և օրինականության հիմնարար սկզբունքներից, այնպես էլ՝ կան բացեր և հակասություններ: Փաստաբանի մասնակցությունը լուրջ իրավական հիմքերի վրա չէ, որովհետև նախաքննության ընթացքում պաշտպանին իրավունք չի տրվում մասնակցել քննչական գործողություններին՝ առանց քննիչի թույլտվության, որը թե՛ փաստաբանի, և թե՛ անձի իրավունքների կոպիտ խախտում է: Այս սահմանումից հետևում է, որ ՀՀ-ում քննիչը պետահիշխանազոր լծակներով օժտված մարմին է, ով կարող է դրսևո-

րել սուբյեկտիվ և չհիմնավորված վերաբերմունք՝ դրանով իսկ խախտելով անձի և փաստաբանի սահմանադրահիրավական հիմնարար իրավունքները և ազատությունները: Ստացվում է, որ փաստաբանը լիարժեք չի կարող իրականացնել իր իրավունքները և ինչ-որ հարցերում կախյալ վիճակում է քննիչից: Պետք է ամրագրել այնպիսի երաշխիքներ, որոնք կարող են հակազդել և չեզոքացնել նման հակասահմանադրական և հակահիրավական նորմերը: Փաստաբանի համար կախվածության մթնոլորտ է ստեղծում այն, որ որակավորման քննությունը բաղկացած է նաև բանավոր հարցազրույցից: Բանավոր հարցազրույցը խաթարում է փաստաբանի անկախության իրավունքը: Այդ իսկ պատճառով հիմնավորված և արդարացված չէ բանավոր քննություն անցկացնելը:

Այնուամենայնիվ, պետք է նկատել, որ օրենքում առկա հակասությունները, մասնավորապես՝ նրանք, որոնք հակասում և խախտում են անհատի իրավունքները և օրինական շահերը, ժամանակի ընթացքում վերացվում են, փոփոխվում կամ պարզապես դադարում են գործելուց: Այս ամենի հիմնավորումն այն է, որ մարդու իրավունքների անշեղ իրականացումը համընդհանուր գերակա խնդիր է, իսկ դրա պաշտպանությունն ունի սահմանադրական հիմք:

Նորմալ իրավական պետություններում, արդարադատության իրականացման գործընթացում բավականին մեծ է փաստաբանի դերը: Փաստաբան-պաշտպանյալ հարաբերություններում փաստաբանից պահանջվում է պաշտպանության համառ և հետևողական իրականացում:

Փաստաբանը կոչված է պաշտպանելու ոչ թե հանցագործությունը, այլ՝ մարդուն, նրա իրավունքներն ու օրինական շահերը, կանխելու չհիմնավորված դատապարտումն ու անարդարացի պատիժը: Փաստաբանի մասնագիտական էթիկայի գործնական նշանակությունը պայմանավորված է նրանով, որ նա օգտվում է դատական ամբիոնից, որը նրան հնարավորություն է ընձեռում ներազդելու մարդկային զանգվածի գիտակցության վրա: Որպես կանոն, դատավարության մասնակիցներից յուրաքանչյուրն իրավասու է գործի նկատմամբ գրավել այնպիսի դիրք, որը համապատասխանում է իր ներքին համոզմանը: Մինչդեռ փաստաբանը մի շարք դեպքերում ստիպված է լինում ճանաչել իր ներքին համոզմունքը, քանի որ նա չի կարող հրաժարվել պաշտպանությունից նույնիսկ այն դեպքում, երբ հանցագործության բնույթը լրիվ հակառակ է բարոյական զգացումին: Նման դեպքերում պաշտպանյալի շահերը, համաձայն փաստաբանի կոչման, պետք է ավելի բարձր դասվեն ճշմարտության շահերից, քանի որ փաստաբանը, իր կոչմանը հավատարիմ, իրավունք չունի բացահայտելու այն հանգամանքները, որոնք մերկացնում են իր պաշտպանյալին: Փաստաբանի համար

առաջնահերթ խնդիր է պաշտպանյալի օրինական շահերը: Փաստաբանական օգնությունն իրենից ներկայացնում է համալիր գործողություններ, որոնք վստահորդի համար առավել բարենպաստ արդյունքի հասնելու նպատակով ազդեցություն են ունենում իրավահարաբերությունների վրա:

Փաստաբանը երբեք չպետք է խորամուխ լինի գործի բարոյական մասի մեջ, դա փաստաբանի համար ճահիճ է: Զգացմունքային դաշտում փաստաբանն անխուսափելիորեն ջախջախվելու է: Փաստաբանի համար կոնկրետ գործը դա խնդիր է, որը նա պետք է լուծի իրավունքի շրջանակներում՝ ուշադրություն չդարձնելով այդ գործում հանդես եկող անձանց: Միաժամանակ փաստաբանի համար պետք է անընդունելի լինի այնպիսի միջոցներ, ինչպիսիք կրում են անօրինական բնույթ:

ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ «Յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով նախատեսված դեպքում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին»: Յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք. այս փաստացի հաղիսանում է յուրաքանչյուր անձի մուտքը դեպի արդարադատություն, որը բնականաբար ապահովվում է փաստաբանների միջոցով:

Փաստաբանությունը բարդ, աշխատատար և միաժամանակ ռիսկային գործունեություն է: Սրանից հետևում է, որ ՀՀ-ում ձևավորելով փաստաբանական ինստիտուտ, անհրաժեշտ է ապահովել այդ ինստիտուտի ֆունկցիաներն իրականացնող անձի, այն է՝ փաստաբանի իրավական պաշտպանությունը:

Գտնվելով շահերի բախման կիզակետում, փաստաբանը պետք է վստահ լինի, որ իր իրավունքները և օրինական շահերը ևս պաշտպանված են:

Փաստաբանը չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել օրենքով սահմանված պահանջներին համապատասխան իրականացված ցանկացած գործողության, ներառյալ՝ իր մասնագիտական պարտականությունները դատարանում բարեխիղճ կատարելիս կամ դատարանում, հետաքննության, նախաքննության և այլ մարմիններում հայտնած կարծիքի և դիրքորոշման համար:

Փաստաբանը, նրա ընտանիքի անդամները և նրանց գույքը գտնվում են պետության պաշտպանության ներքո:

Փաստաբանի գործունեության բնույթից ելնելով՝ օրենքը նախատեսում է փաստաբանի գործունեության սահմանափակումներ: «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի համաձայն՝ անձը չի կարող լինել փաստաբան, եթե նա՝

1. դատարանի վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.
2. դատապարտվել է դիտավորությամբ կատարված հանցագործության համար, և նրա դատվածությունը մարված կամ հանված չէ:

Սակայն հոդվածի 2-րդ մասը ըստ իս որոշակիորեն ճիշտ չէ, որովհետև այստեղ օրենսդիրը շեշտը պետք է դնի ոչ թե դատվածության մարված կամ հանված լինելու վրա, այլ այն հանգամանքի, որ անձը հանցավոր է: Այստեղ խնդիրը անձի անձնային հատկանիշների և հակվածությունների մեջ է: Եվ այն հանգամանքը, որ անձը դիտավորյալ հանցանք է կատարել, արդեն իսկ պետք է հիմք հանդիսանա, որ նման անձը զրկված լինի փաստաբան լինելու հնարավորությունից: Օրենսդիրը նորմն ընդունելով, հիմք է ընդունել դատվածության մարման կամ հանման հարցը, սակայն առավել կարևոր էր անձի՝ հասարակության համար վտանգավոր լինելու հանգամանքը: Հետևաբար, կարծում եմ օրենսդիրը պետք է դադարեցնի 33-րդ հոդվածի 2-րդ մասի գործողությունը՝ ելնելով դրա աննպատակահարմարության տեսանկյունից:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի հոդված 25-ի բովանդակությունից հետևում է, որ փաստաբանական գաղտնիք են համարվում այն տեղեկությունները, որոնք վստահորդը փոխանցել է փաստաբանին, ինչպես նաև այն տեղեկությունները և ապացույցները, որոնք փաստաբանը փաստաբանական գործունեության իրականացման ընթացքում ձեռք է բերել ինքնուրույն, և որոնք հայտնի չեն հանրությանը: Այս հոդվածի իրավական երաշխիքը այն է, որ արգելվում է փաստաբանին որպես վկա հարցաքննել այն հանգամանքների մասին, որոնք նրան հայտնի են դարձել իրավաբանական օգնություն ցույց տալու նպատակով իրեն դիմելու կամ իրավաբանական օգնություն ցույց տալու կապակցությամբ:

Փաստաբանը հրապարակում է փաստաբանական գաղտնիքը, եթե՝

1. առկա է վստահորդի համաձայնությունը.
2. դա անհրաժեշտ է նրա և վստահորդի միջև ծագած դատական վեճում պահանջները հիմնավորելու կամ իր պաշտպանության համար.
3. առկա է ՀՀ քրեական օրենքով նախատեսված՝ հաստատապես հայտնի նախապատրաստվող ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մասին տեղեկատվություն: Փաստաբանական գաղտնիքի պահպանման պարտականությունը չի սահմանափակվում ժամանակի մեջ:

Հոդվածի 3-րդ մասն ունի որոշակի երկակիություն: Ստացվում է, որ վստահորդը չպետք է վստահի փաստաբանին, որովհետև նա կարող է հրապարակել փաստաբանական գաղտնիքը, եթե առկա են նշված հոդվածի 3-րդ մասի հանգամանքները: Այսինքն, փաստաբանի լիարժեք և

անկաշկանդ գործունեության երաշխիքները դեռևս սահմանված չեն: Չնայած այն հանգամանքի, որ գոյություն ունի «Փաստաբանության մասին» ՀՀ օրենք, այնուամենայնիվ դա բավարար և անհրաժեշտ երաշխիք չէ փաստաբանի գործունեությունը կատարյալ դարձնելու համար:

Փաստաբանության ինստիտուտը ՀՀ-ի համար նորույթ է և դեռ կատարելագործման և բացերի լրացման կարիք ունի:

Փաստաբանության յուրահատկությունը, գործունեության ոլորտում առաջացող հակասությունները և անճշտությունները, շատ դեպքերում հասարակության և անհատի պահանջներին անհամապատասխանության խնդիրը և այլ հարցերը կապված են նաև տվյալ հասարակության իրավագիտակցության և մտածողության հետ: Փաստաբանությունը անհատի իրավունքների և օրիական շահերի պաշտպանության ընթացքում կիրառվող խիստ մասնագիտական գիտելիքների և հմտությունների կիրառում է, ուստի այն պետք է բավարարի տվյալ երկրի հասարակության, անհատի պահանջմունքները:

ՀՀ-ում ներկայումս փաստաբանությունը զարգացում է ապրում, սակայն դա չի կարող համեմատվել Եվրոպական երկրների փաստաբանական ինստիտուտի գործունեության հետ: Այս պատնեշը հաղթահարելուն խոչընդոտ է հանդիսանում նաև քաղաքացիների՝ իրավագիտակցությունը և վստահությունը փաստաբանների նկատմամբ: Եվրոպական երկրներում՝ հատկապես Ֆրանսիայում, Գերմանիայում, Շվեյցարիայում անհատների կողմից իրենց իսկ իրավունքների և պարտականությունների իմացության մակարդակը բավականին բարձր է: Նրանք բավարար չափով տեղեկացված են իրենց իրավունքների և համապատասխանաբար պարտականություններին: Դրան է գումարվում նաև նրանց ազգային մտածելակերպը. այն է՝ վստահություն փաստաբանների նկատմամբ և անհրաժեշտության դեպքում փաստաբանի ծառայությունից օգտվելու քաղաքակիրթ սովորույթ: Ի հակառակ այս դրական հանգամանքներին, ՀՀ-ում չկա փաստաբանի խորհրդատվությանը դիմելու սովորույթը և առավել ևս վստահությունը և հավատը նրանց մասնագիտական հմտությունների և վստահված հիմնական պարտականությունների նկատմամբ: Մեր մտածողությանը բնորոշ է, որ փաստաբանը և առհասարակ իրավաբանը ելնում են սեփական նյութական շահերից և ցանկացած դեպքում մեր շահերը խախտվելու են, քանի որ փաստաբանի հետ փոխշահավետ համաձայնության գալը գրեթե անհնար է և պարզապես ժամանակի և գումարի վատնում: Ահա այս հանգամանքներն են, որ խանգարում են այսօր փաստաբանության զարգացմանը մեր երկրում: Սակայն փաստաբանության ներկայիս վիճակը իր սկզբնական դիրքերից քայլ առ քայլ առաջ է շարժվում դեպի զարգացում և դիրքերի կայուն ամրապնդում: Կարելի է ասել, որ ՀՀ-ում առկա է փաստաբանական ինստիտուտը և փաստաբանությունը:

Այնուամենայնիվ, ՀՀ-ում փաստաբանության վրա ոչ ճիշտ և ոչ նպաստավոր ազդեցություն ունի նաև փաստաբանի՝ ՀՀ բարձրագույն կրթության ձևն ու սկզբունքները: Ի տարբերություն ՀՀ-ում փաստաբանական կրթության համակարգին, Ֆրանսիայում գոյություն ունի հետբուհական ծրագիր, որը պատրաստում է պրոֆեսիոնալ փաստաբաններ: Բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողները, ստանալով իրավաբանական բարձրագույն կրթություն և ցանկանալով դառնալ փաստաբան, պետք է հանձնեն ընդունելության քննություններ փաստաբանական դպրոցում: Փարիզի փաստաբանական ուսուցումը տևում է 18 ամիս: Այստեղ ուսուցանվում է հռետորական արվեստ, մասնագիտական էթիկայի կանոններ՝ դեոնթոլոգիա, իրավունքի այլ ճյուղեր: Եվ միայն այս դպրոցի վկայականը ստանալուց հետո է, որ անձը կարող է դիմում ներկայացնել փաստաբանական պալատի անդամ դառնալու համար: Այս օրինակը փաստում է, թե այսօր ՀՀ-ում որքան թույլ է զարգացած փաստաբանությունը: ՀՀ-ում փաստաբան դառնալու համար իրավաբանը 2 տարի մասնագիտական աշխատանքային փորձ պետք է ունենա և հետո միայն հավակնի փաստաբանական պալատի անդամ դառնալուն և իրականացնի փաստաբանի գործունեություն: Սակայն ՀՀ-ում փաստաբանները չեն սովորում հռետորական արվեստ կամ մասնագիտական էթիկայի կանոններ: Երկու տարվա մասնագիտական աշխատանքը իրավաբանական ոլորտում դեռևս փաստաբանական հմտությունների ձեռքբերման և առավել ևս կիրառման մասին չի խոսում: Այսինքն՝ անձը, աշխատելով իրավաբանական ոլորտում, կարող է լինել հմուտ իրավաբան, բայց ոչ փաստաբան: Փաստաբան լինելու համար պետք է ունենալ սահուն և համոզիչ փաստաբանական ճառ, տիրապետել հռետորական արվեստին: Այսինքն՝ փաստաբանի տարբերությունն այլ մասնագիտական ուղղվածություն ունեցող իրավաբաններից կայանում է ճառի՝ համոզելու արվեստի մեջ, ինչը այսօր ՀՀ փաստաբանության մեջ դեռևս չի կիրառվում:

Խիստ էական է, որ խոսքը, շփման գործընթացում լինի առավել արդյունավետ ու կուռ, նպատակասլաց ու ազդեցիկ, միտքն արտահայտվի բովանդակալից ու հասկանալի, հենվի խորը, արժեքավոր զգացմունքների վրա: Ահա սա է փաստաբանական ճառի գրավականը, որը անշուշտ հենված է հռետորական արվեստի և էթիկայի կանոնների վրա:

Շատ երկրներում, որտեղ փաստաբանությունը կատարելության է հասցված, ընդունված է, որ փաստաբանը պետք է հոգեբանական ճնշում գործադրի երդվյալ ատենակալների վրա դատավարության ընթացքում իր խոսքի առոգանությամբ, հուզականությամբ, դիմախաղով, շարժումներով, ձայնային ելևէջներով: Ողջ դատավարության ընթացքում փաստաբանը քայլում է՝ փորձելով լինել բոլորի ուշադրության

կենտրոնում և իր խոսքը ոչ միայն ընկալելի, այլև ընդունելի դարձնել: Սակայն այս մեթոդը չի գործում մեր իրավական համակարգում:

ՀՀ-ում քրեական դատավարության ընթացքում հիմնականում փաստաբանի դերը ապացույցների և այլ փաստերի ու փաստարկների միջոցով պաշտպանյալի իրավունքների պաշտպանությունն է, նրա վիճակի բարելավումը: Սակայն սա անհամեմատելի է այն ահռելի ու բարդ առաքելության հետ, ինչ կատարվում է ԱՄՆ-ի կամ Եվրոպական երկրների փաստաբանների կողմից:

Փաստաբանի կրթական մակարդակի բարձրացումը, հետևապես պահանջների խստացումը կարող է հանգեցնել միայն դրական հետևանքների, որը բխում է թե՛ ադարադատության, թե՛ քաղաքացիների իրավունքների արդյունավետ պաշտպանության շահերից: Իրավաբանական կրթության բարդեցումն ապահովում է փաստաբանական բարձր գիտելիքներ:

Փաստաբանության նրբությունները էականորեն առանձնանում են և պահանջում են առանձնացված և խորը ուսուցում: Այս ամենից հետևում է, որ ներկայումս ՀՀ-ում փաստաբանության մեջ առկա թերությունների համար պետք է մեղադրել ոչ ճիշտ կրթության իրականացման ձևին: Այն ինչ իրականացվում է փաստաբաններ պատրաստելու համար, անհրաժեշտ և բավարար չէ: Անհրաժեշտ է, որ փաստաբան դառնալու համար պահանջվի կոնկրետ փաստաբանության ոլորտում աշխատանքային փորձ կամ փաստաբանական գիտելիքների խորը ուսումնասիրում համապատասխան բուհական կառույցներում: ՀՀ-ում առկա փաստաբանությունը հնարավոր չէ ուսումնասիրել անկախ, կտրված և առանձնացված այլ պետությունների փաստաբանությունից: Առանց ուսումնասիրելու զարգացած երկրների փաստաբանական վիճակը, անհնար է գնահատական տալ մեր երկրում գործող փաստաբանական ինստիտուտի վիճակին և զարգացվածության մակարդակին: Յուրաքանչյուր երևույթ պետք է ուսումնասիրել համեմատության մեջ, հատկապես, որ Հայաստանը մասնակից է միջազգային իրավական պայմանագրերի քննարկմանը և կնքմանը: Միջազգային նորմերից անմասն չի մնում մեր իրավական համակարգը, հետևաբար այլ երկրների իրավական դաշտերի ուսումնասիրությունը, մասնավորապես՝ փաստաբանության վիճակի և այն կարգավորող օրենքների վերլուծությունը, կօգնեն ճիշտ արժեքավորելու ՀՀ փաստաբանության վիճակը և զարգացման օրինաչափությունները: Փաստաբանության մեջ ցանկացած երևույթ պետք է համեմատել այլ երկրների փաստաբանության միևնույն երևույթի հետ և գտնել օգտակարն ու նպատակահարմարը: Գտնել նաև փաստաբանության հետագա զարգացման ուղիները, միտումները և օրինաչափությունները: Այլ երկրներից որդեգրել միայն այն մեթոդները և

գործունեության ձևերը, որոնք կարող են գործել ՀՀ-ում և ծառայել իրենց նպատակների և խնդիրների իրականացմանը:

Այսօր փաստաբանությունը ՀՀ-ում ձևավորման փուլում է և դեռ հեռու է կատարյալ լինելուց: Սակայն զարգացման օրինաչափությունները վկայում են, որ չնայած ներկայիս թերություններին և երբեմն անտրամաբանական նորմերին, այնուամենայնիվ, փաստաբանությունը զարգանում է. էական տարբերություն կա սկզբի և այսօրվա միջև: Այն գնալով հաստատում է իր դիրքերը: Հասարակական հնչեղություն է ստանում թե՛ դրա կարևորության, և թե՛ անհրաժեշտության հարցը:

Փաստաբանության զարգացումը ՀՀ-ում ունի որոշակի նպատակներ և միտումներ: Այն իրականացվում է կոնկրետ նպատակի հասնելու համար:

## Զարգացման հեռանկարը

Մենք մեր ազգային խառնվածքով շատ հեշտ ենք ընդունում օրենքի խախտումը: Միաժամանակ հարցն ի օգուտ մեզ լուծելու համար պատրաստ ենք օրենքը խախտել ցանկացած գնով: Այստեղ էլ առաջ է գալիս փաստաբանի ծառայությունից օգտվելու անհրաժեշտությունը: Փաստաբանը պատրաստ է աջակցել վստահորդին իրեն ձեռնտու կեղծ ցուցմունք տալու հարցում: Փաստաբանը փորձում է օրենքի բացերից և թերություններից ճողոպրելով պաշտպանել վստահորդի շահերը և հետևաբար իր իսկ շահերը: Սակայն օրենքները ճիշտ կիրառելու դեպքում չեն լինի այն բոլոր խնդիրները, որոնք իրականում կան: Սակայն սա ձեռնտու չէ ո՛չ փաստաբանին, ո՛չ էլ դատական համակարգին:

Բոլորս էլ ուզում ենք արդար դատաքննություն և օրենքների արդար կիրառում: Սակայն հարկ եղած դեպքում ոչինչ չենք ձեռնարկում և որևէ ձևով չենք արձագանքում: Հասարակության ճնշող մեծամասնությունն իրավական տարրական գիտելիքներից զուրկ է, մարդիկ անտեղյակ են իրենց իրավունքներին, կազմակերպությունները չեն զբաղվում ազգաբնակչությանը իրավական գիտելիքներ մատուցելով:

Փաստաբանական ինստիտուտը նույն վիճակում է, ինչ գործադիր, օրենսդիր և դատական իշխանությունները: Նույն ԲՈՒՀ-ն ավարտած անձանցից մեկը դատախազությունում է աշխատում, մյուսը փաստաբան է: Փաստաբանի պարտքն է կանխել օրենքի խախտումը, բայց, երբ հնարավորություն է լինում, նա ևս խախտում է:

Արդեն 5-6 տարի է փաստաբանական ինստիտուտի զարգացման գործընթացը սկսվել է: Այն փաստաբանները, ովքեր լրջորեն չեն տիրապետում իրենց մասնագիտությանը, պահանջարկ չեն ունենա, ընթացքը դրան է տանում: Մեր երկրում տնտեսվարող սուբյեկտների քա-

նակը ավելանում է և դրանք լավ իրավաբանների կարիք ունեն: Փաստաբանների պահանջարկը նպաստում է փաստաբանների շահագրգռվածությանը՝ իրենց մասնագիտական որակները բարձրացնելու հարցում:

Փաստաբանի կարևորագույն հատկանիշն այն է, որ անկաշկանդ է գործում: Նա պետությունից աշխատավարձ չի ստանում: Փաստաբանը պետք է ձգտի գիտելիքների ավելացմանը, փաստաբանական հմտությունների ձեռքբերմանը: Այնուամենայնիվ, փաստաբանների գիտելիքները լրացնելու հարցում Պալատը ևս շատ անելիք ունի:

Փաստաբանության զարգացման հարցում շատ կարևոր է նաև գովազդը: Օրեցօր ավելանում է փաստաբանական գրասենյակների թիվը, բայց քանի որ գովազդը բավականին թանկ հաճույք է, նրանք իրենց գրասենյակները չեն գովազդում: Նրանց գովազդն իրենց վստահորդներն են, ովքեր իրենց հետ նոր հաճախորդներ են բերում:

Բարելավման միջոց պետք է դիտել նաև անվճար իրավաբանական ծառայության և խորհրդատվական գրասենյակների առկայությունը: Այս հարցը մասամբ պիտի լինի պետության հովանու ներքո: Այսօր փաստաբանի ծառայությանը դիմելը բավականին թանկ հաճույք է: Հայաստանում գործող փաստաբանական անվճար խորհրդատվական ծառայությունները քիչ են: Այսինքն՝ քաղաքացին, ով իրավաբանական գիտելիքներ չունի, պետք է որոշակի կլորիկ գումար նախատեսի իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության վերաբերյալ մի քանի խորհուրդ ստանալու համար: Սա ևս լուրջ բաց է իրավական և ժողովրդավարական պետության համար: Պետությունը պետք է ֆինանսավորի որոշ իրավաբանական գրասենյակներին, որպեսզի իրավաբանական խորհրդատվությունն անվճար և հասու լինի սոցիալապես անապահով խավի համար: Այստեղից էլ հետևում է, որ ՀՀ-ում փաստաբանության զարգացման համար անհրաժեշտ է պետության կողմից փաստաբանական ինստիտուտին մեկնած օգնության ձեռքը: Հակառակ դեպքում ստացվում է, որ Հայաստանում իրավունքների պաշտպանություն և փաստաբանական խորհրդատվություն ստանալու իրավունք ունեն միայն ֆինանսապես ապահովված անձինք: Այսօր փաստաբանական ծառայությունը հասու չէ բոլորին:

Բարեբախտաբար 2006թ.-ից Փաստաբանների պալատում գործում է հանրային պաշտպանի գրասենյակը, որի նպատակը սոցիալապես անապահով խավին անվճար իրավաբանական օգնություն տրամադրելն է: Այստեղ առաջընթացն արդեն նկատելի է: Հանրային պաշտպանի պահանջարկը մեծացել է, քաղաքացին ունի հանրային պաշտպանի կարիքը, արդեն որոշակի պատկերացում կա նրանց դերի և նշանակության մասին: Պետության տրամադրած ֆինանսական միջոցները բավարար են դրա համար, բայց դեռևս խնդիրներ կան տա-

ռածքային առումով: Ստացվում է, որ միայն երևանաբնակներն են, որ պաշտպանության իրավունք և հնարավորություն ունեն: Շրջանները և առավել ևս գյուղերը դեռևս հեռու են քաղաքակրթության այսպիսի նվաճումներից: Գյուղացիները հնարավորություն չունեն դիմելու, օրինակ, հանրային պաշտպանին կամ փաստաբանին՝ տարածքային խնդիրների պատճառով: Շրջաններում և գյուղերում չկան իրավաբանական գրասենյակներ և անհրաժեշտ մասնագետներ: Այսօր լուրջ խնդիր կա հասարակության, հատկապես գյուղացիների և շրջաններում ապրողների իրավագիտակցության և տարրական իրավական գիտելիքների ձևավորման հարցում: Դեռևս բավարար չէ հանրային պաշտպանի գրասենյակի աշխատանքների քարոզչությունը, բայց այդ ուղղությամբ տարվում են աշխատանքներ:

Միջազգային կազմակերպությունների օժանդակությամբ, ուշադրությունից դուրս չեն մնացել նաև կալանավորները: Շաբաթական մեկ օր տվյալ մարզում աշխատող հանրային պաշտպանները պետք է հանդիպեն կալանավորների հետ:

Առաջընթաց քայլ և բարեփոխում կդիտվի «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում օրենսդրական փոփոխությունը, համաձայն որի, քաղաքացիական գործերով հանրային պաշտպանի մասնակցությունը լինի ոչ թե ըստ գործի բնույթի, այլ անվճար իրավաբանական օգնություն տրամադրվի սոցիալապես խոցելի խմբերին: Ներկայումս հանրային պաշտպանները անվճար իրավաբանական օգնություն են տրամադրում քրեական և քաղաքացիական գործերով՝ ալիմենտի գանձման վերաբերյալ, խեղման կամ առողջությանն այլ վնաս պատճառելու, ինչպես նաև կերակրողի մահվան հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման վերաբերյալ գործերով:

Այսօրվա իրավական համակարգի սահմաններում անարդարացի է այն, որ փաստաբանները, և մասնավորապես, հանրային պաշտպանները մարդասպանի պահանջի հիման վրա վազելով գնում են պաշտպանելու նրա իրավունքները, որովհետև պարտավորված են օրենքով: Մինչդեռ նրանց են դիմում քաղաքացիներ, ովքեր զրկվել են իրենց բնակարանից, աշխատանքից և նյութական վատ վիճակում գտնվելու պատճառով չեն օգտվել իրենց դատական պաշտպանության իրավունքից, որովհետև հանրային պաշտպանները նրանց անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու իրավունք չունեն: Տուժողը, որի հարազատին մեղադրյալը սպանել է, հափշտակել նրա ողջ ունեցվածքը, չի օգտվում անվճար իրավաբանական օգնությունից:

Փաստաբանական անվճար օգնության հարցում լուրջ բաց է այն, որ սոցիալապես խոցելի խումբ ասելով, ինչ հատկանիշների համակցություն է հասկանում օրենսդիրը:

Մեկնաբանում կամ օրենքի հղում չկա այն հարցի շուրջ, թե երբ է տրամադրվում փաստաբանի անվճար օգնության իրավունք: Օրենքը նշում է, որ ելնելով գույքային դրությունից: Սակայն ինչ պետք է հասկանալ գույքային դրություն ասելով, և հետևաբար ովքեր են, որ կարող են փաստաբանի ծառայությունից անվճար օգտվել: Այս բացը ևս մեկնաբանման և հստակեցման կարիք ունի: Թե՛ հասարակության իրավահիմացության բարձրացման, թե՛ փաստաբանության զարգացման հարցում մեծ դեր և նշանակություն կարող է ունենալ գովազդը: Գովազդի ժամանակ կարող է գրվել նոր ընդունված կամ փոփոխված իրավական նորմը: Հեռուստահաղորդման ժամանակ կարող է իրավական նորմը գրվել վազող տողով և այլն: Սա կնպաստի իրավահիմացության մակարդակի բարձրացմանը: Կարող է գովազդվել նաև այս կամ այն փաստաբանական գրասենյակը: Այսինքն, զարգացման մեթոդները և ձևերը բազմաթիվ են: Պարզապես անհրաժեշտ է պետության աջակցությունը՝ կայուն հեռանկարի և օրինաչափ զարգացման համար:

## Եզրափակիչ մաս

Փաստաբանության զարգացումը ՀՀ-ում հնարավոր և իրականանալի ծրագիր է, իսկ միտումներն արդեն նկատելի են: Փաստաբանության հետ կապված առաջընթաց է նկատվում թե՛ օրենսդրական դաշտում, և թե՛ հասարակության լայն զանգվածներում: Փաստաբանության և փաստաբանի հանդեպ վստահությունը գնալով աճում է, իսկ դրա երաշխիքներն ու հիմքերը իրենց իրավական ամրագրումն են ստանում:

Որպես ամփոփում պետք է նշել, որ փաստաբանի համար առաջնահերթ խնդիր է հանդիսանում իր վստահորդի (պաշտպանյալի) շահերը, որը նա պետք է պաշտպանի օրինական միջոցներով, միաժամանակ փաստաբանը հանդիսանում է նաև իրավունքի զինվոր, քանի որ փաստաբանի գործունեության հետևանքով տվյալ պետությունը դառնում է առավել իրավական:

Փաստաբանական ինստիտուտի զարգացումը Հայաստանում այլընտրանք չունի և միայն անկախ, հզոր և ինքնակառավարվող փաստաբանական ինստիտուտն է ի վիճակի իրականացնել լուրջ բարեփոխումներ արդարադատության համակարգում:

Փաստաբանությունը Հայաստանում անպայմանորեն զարգացում կապրի, որովհետև դրա համար կան անհրաժեշտ բոլոր նախադրյալները. հմուտ և գիտակ իրավաբաններ, օրենսդրական և իրավական դաշտի զարգացման և կատարելագործման միտում, փաստաբանի պահանջարկի աճ տնտեսվարող նոր սուբյեկտների կողմից և, որն

ամենակարևորն է՝ հասարակության մեջ փաստաբանի դերի և կարևորության՝ արդեն իսկ ձևավորված նոր արժեհամակարգ:

## Օգտագործված գրականության ցանկ

*Նորմատիվ իրավական ակտեր*


1. ՀՀ Սահմանադրություն, ընդունված 05.07.1995թ. (27.11.2005թ. փոփոխություններով):
2. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենք, ընդունված 14.12. 2004թ.:
3. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, ընդունված 01.07.1998թ.:
4. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, ընդունված 17.06.1998թ.:


*Ինտերնետային կայքեր*


www.wikipedia.am
www.advocat.am
www.pastaban.am
www.google.com psychology of lawyer/negotiation skills of an advocate

*ՄԱՐԻՆԵ ՔՈՉԱՐՅԱՆ*

# Ներածություն

Փաստաբանություն բառն առաջացել է լատիներեն advocates բառից, նշանակում է «Օգնության կանչված»: Այս բառը անգլերեն լեզվում հայտնի է հետևյալ տարբերակներով՝ lawer, barrister, advocate: Սա այն իրավաբանն է, որը խորհրդատվությունների, միջնորդությունների ժամանակ պաշտպանության միջոցով մասնագիտական խորհրդատվություն է տալիս մարդուն՝ որպես կասկածյալի, մեղադրյալի, ամբաստանյալի, դատապարտյալի, ինչպես հետաքննության և նախաքննության, այնպես էլ դատաքննության փուլերում՝ ներկայացնելով և պաշտպանելով վստահորդի շահերը:

Հնում, երբ այնքան էլ լավ զարգացած չի եղել մարդու միտքը, նա կարողացել է պահպանել իր գոյությունը ինքնապաշտպանության եղանակներով: Սակայն, երբ արդեն հասարակության մեջ արմատավորվել են հարձակումները, բռնությունը, և մարդը սկսել է վտանգը զգալ իրեն ավելի մոտ՝ փորձել է գտնել պաշտպանության առավել արդյունավետ միջոցներ: Կարող ենք ասել, որ հենց այդ ժամանակվանից էլ ի հայտ են եկել փաստաբանության՝ որպես պաշտպանության միջոցի սաղմերը:

Փաստաբանության զարգացման պատմությունը տևել է երկար տարիներ՝ շարունակվելով մինչ օրերս: Դա բազմակողմանիորեն զարգացած գիտություն է, քանի որ դրա վրա ազդել են ինչպես պետության գործող կառավարման կարգը, այնպես էլ քաղաքականությունը և այլ գործոններ:

Որպես սահմանում կարող ենք ասել, որ փաստաբանական գործունեությունն այն իրավաբանական օգնությունն է, որը համապատասխանեցվելով գործող օրենսդրությանը, տրամադրվում է ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ նրանց շահերի ներկայացման և պաշտպանության նպատակով:

Ժամանակակից ձևով փաստաբանությունը բնութագրվում է որպես փաստաբանի կարգավիճակ ստացած անձանց մասնագիտական միավորում, որը հանդիսանալով քաղաքացիական հասարակության ինստիտուտ, չի մտնում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների մեջ:

## Փաստաբանության զարգացման պատմությունը

***Փաստաբանական գործունեության հասկացությունը.***

Փաստաբանությունը գիտություն է, որն իր երկարատև զարգացման ընթացքում անընդհատ կրել է նորարարության տարրերը և վերածվել բավականին բարդ ու հարուստ իրավական ինստիտուտի: Փաստաբանության ակունքները գալիս են այն ժամանակվանից, երբ հասարակության մեջ դեռ լավ զարգացած չի եղել իրավական միտքը, սակայն այն՝ որպես գիտություն, հաստատվել է պետության կողմից պաշտոնապես ճանաչում ստանալուց հետո:

Յուրաքանչյուր պետություն յուրովի է վերաբերվել փաստաբանությանը, քանի որ դրա ձևավորումը հիմնականում կապված է եղել այդ տարածաշրջանում տարածված սովորույթների և իրավական սկզբունքների հետ: Ցանկացած երկրում փաստաբանության զարգացումը տեղի է ունեցել աստիճանաբար՝ կապված լինելով պետության կառավարման կարգի, տնտեսական և քաղաքական պայմանների հետ:

Մասնավորեցնելով փաստաբանության զարգացումը Հայաստանի Հանրապետությունում, կարելի է ասել, որ այն բուռն կերպով սկսել է զարգանալ այն ժամանակվանից, երբ ծնունդ է առել Հայաստանի 1-ին Հանրապետությունը, որը գտնվում էր խորը ճգնաժամային իրավիճակում: Արդեն իսկ խորհրդային տարիներին ընդունվեցին մի շարք իրավական ակտեր, և նույնիսկ հաստատվեց ՀԽՍՀ Սահմանադրությունը: Ընդունված իրավական ակտերի մեջ որոշ դրույթներ վերաբերում էին պաշտպաններին և նրանց կոլեգիային, սակայն «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը ամբողջովին ձևակերպում չէր ստանում: Իսկ արդեն հետխորհրդային առաջին տարիներին կատարված փոփոխություններով և 1995թ. ընդունված Սահմանադրության մեջ փաստաբանական գործունեությունը հստակ ամրագրում ստացավ: Հետագայում ընդունված մի շարք օրենքներ հիմք հանդիսացան փաստաբանության կատարելագործման համար:

Այսպիսով, փաստաբանությունը բնութագրվում է որպես բոլոր մարմիններից անկախ, ազատ մասնագիտություն, որը առավել մանրամասն կարգավորում է ստանում «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով: Ելնելով փաստաբանության անկախության սկզբունքից՝ անհրաժեշտ է նշել, որ այն չի ենթարկվում որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի և անկախ է իր գործունեության մեջ:

***Փաստաբանը. նրա գործառույթները.***

«Յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք»[1]: Սակայն որակյալ իրավաբանական օգնություն կարող է տրամադրել միայն փաստաբանը: Փաստաբան է համարվում այն անձը, ով ունի փաստաբանական գործունեություն իրականացնելու արտոնագիր, փաստաբանների պալատի անդամ է և տվել է երդում: Փաստաբանն իրավական հարցերով անկախ խորհրդատու է և օրենքով չարգելված միջոցներով ու եղանակներով ներկայացնում ու պաշտպանում է իրավաբանական օգնություն ստացողի օրինական շահերը:

Փաստաբանի հիմնական գործառույթն իրավաբանական օգնության տրամադրումն է, որը կարող է լինել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր: Նա կազմում է դիմումներ, բողոքներ, գանգատներ, միջնորդություններ և այլն:

ՀՀ քաղաքացիադատավարական օրենսդրության համաձայն. «Քաղաքացիները կարող են դատարանում իրենց գործերը վարել անձամբ կամ ներկայացուցչի միջոցով»[2]: Այս հոդվածը հիմք է հանդիսանում ասելու, որ փաստաբանը քաղաքացիական գործերով վարույթին մասնակցում է՝ որպես վստահորդի շահերը պաշտպանող ներկայացուցիչ:

«Քաղաքացիական հայցվորը կամ նրա օրինական ներկայացուցիչը, կասկածյալի և մեղադրյալի օրինական ներկայացուցիչը, ինչպես նաև քաղաքացիական պատասխանողը քրեական դատավարության ընթացքում իրավունք ունեն օգտվել իրենց հրավիրած ներկայացուցիչների իրավաբանական օգնությունից», «Պաշտպանի կողմից կասկածյալին և մեղադրյալին ցույց տրվող իրավաբանական օգնությունը վարձատրվում է վստահորդի միջոցների հաշվին՝ պաշտպանի և վստահորդի միջև փոխհամաձայնեցված պայմաններով, կամ պաշտպանի համաձայնությամբ ցույց է տրվում անվճար»[3]: Իսկ այս հոդվածի վերլուծությունից կարող ենք ենթադրել, որ փաստաբանը քրեական դատավարությանը հանդես է գալիս պաշտպան կամ ներկայացուցիչ:

Հայաստանի Հանրապետությունում կարող է փաստաբանական օգնություն ցույց տալ նաև օտարերկրացի փաստաբանը, որն իր գործունեությունն իրականացնում է փաստաբանների պալատի կանոնադրությամբ և փաստաբանների վարքագծի կանոնագրքով սահմանված կարգով: Սակայն օրենքում նշված է, որ Հայաստանի Հանրապետությունում օտարերկրացի փաստաբանը գործում է իր պետության հա-

---

[1] Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, ընդունված 05.07.1995թ. (27.11.2005թ. փոփոխություններով), հոդված 20:

[2] Տե՛ս ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, ընդունված 17.06.1998թ., հոդված 39, կետ 1:

[3] Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, ընդունված 01.07.1998թ., հոդված 10, կետ 3, հոդված 165, կետ 1:

մապատասխան փաստաբանական կառույցի տված արտոնագրի հիման վրա, բայց իր գործունեությունն իրականացնելու համար պետք է հավատարմագրվի ՀՀ փաստաբանների պալատում:

Վերլուծելով օրենքի այս հատվածը, պետք է հանգել այն եզրակացության, որ Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական գործունեություն իրականացնելու իրավունք ունեն ինչպես ՀՀ, այնպես էլ օտարերկրյա քաղաքացիները: Այստեղ ոչ մի նշում չկա քաղաքացիություն չունեցող անձանց մասին:

Կարծում եմ, որ օրենքով պետք է թույլատրել և հստակ ամրագրել քաղաքացիություն չունեցող անձանց փաստաբանական գործունեություն իրականացնելու կարգը: Քանի որ, եթե փաստաբանական գործունեությունն անկախ ինստիտուտ է և վստահորդը վճարում է փաստաբանին՝ իրեն օգնություն ցուցաբերելու համար, ապա նա իր ընտրության հարցում պետք է ազատ լինի: Իսկ տվյալ դեպքում օրենքը սահմանափակում է վստահորդի ընտրության ազատությունը: Հետևաբար, եթե ՀՀ քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց և օտարերկրացի փաստաբանների ազատ գործունեությունը կատարվի օրենքի շրջանակներում, ապա սա կնպաստի փաստաբանության զարգացմանը, քանի որ մրցակցությունը միշտ էլ առաջադիմության և զարգացման գրավական է հանդիսացել:

***Փաստաբանի հիմնական իրավունքներն ու պարտականությունները.***

Փաստաբանի իրավունքները սահմանվում են օրենքով: Փաստաբանը իրավաբանական օգնության տրամադրման ժամանակ իրավունք ունի իր գործունեության արդյունավետությունից ելնելով, օրենքով սահմանված կարգով ձեռք բերել և ներկայացնել վստահորդի շահերից բխող ապացույցներ, անհրաժեշտության դեպքում դիմել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին կամ կազմակերպություններին՝ նրանցից փաստաթղթեր ստանալու պահանջով: Իսկ տեղեկատվության տնօրինողներն էլ պարտավոր են տրամադրել պահանջվող փաստաթղթերը, կամ էլ դրանց պատճենները: Որպեսզի նման մարմինները չհրաժարվեն և ժամանակին տրամադրեն համապատասխան փաստաթղթերի պատճենները, օրենքը դրանց տրամադրման համար սահմանել է հստակ ժամկետներ[4]:

Փաստաբանի իրավունքների շարքում ամրագրված է նաև, որ նա կարող է գրավոր հարցման ենթարկել այն անձանց, ովքեր, ըստ նրա, տեղեկություններ ունեն գործի վերաբերյալ:

---

[4] Տե՛ս «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, ընդունված 23.09.2003թ., հոդված 9:

Իրավաբանական օգնություն ցույց տալու համար՝ պայմանագրային հիմունքներով, փաստաբանն իրավունք ունի գործում ներգրավել այլ մասնագետների: Այսպիսով, կարելի է ասել, որ օրենքը բավականին լայն իրավունքներ է տալիս փաստաբանին՝ օրենքի շրջանակներում արդյունավետ գործունեություն իրականացնելու համար:

Փաստաբանն իր ունեցած իրավունքների հետ միաժամանակ ունի նաև հստակ սահմանված պարտականություններ, որոնք ըստ էության բխում են վստահորդի շահերից: Փաստաբանը պարտավոր է, ՀՀ օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով, ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը՝ չխախտելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը, փաստաբանի վարքագծի կանոնագիրքը և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:

Փաստաբանը, ելնելով վստահորդի շահերից, հաշվի առնելով նաև նրա անվտանգությունը, պարտավոր է չհրապարակել փաստաբանական գաղտնիքը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Փաստաբանի պարտականությունների մեջ է մտնում նաև չկատարել այնպիսի գործողություններ, որոնք կհակասեն վստահորդի շահերին: «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ կետը փաստաբանի համար որպես պարտականություն՝ նախատեսում է գիտելիքների կատարելագործումը:

Կարծում եմ, որ գիտելիքների կատարելագործումը կապված է մասնագիտական որակավորման, վստահորդների շրջանում նրա ունեցած հեղինակության և վստահության հետ: Ուստի գիտելիքների կատարելագործումը պետք է համարել ցանկություն, այլ ոչ թե օրենքով ամրագրված պարտականություն:

## Փաստաբանական գործունեության արտոնագրումը

Փաստաբանական գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ է, որպեսզի այդպիսի գործունեություն իրականացնելու ցանկություն ունեցող անձը ստանա արտոնագիր: Արտոնագրման համար անհրաժեշտ է, որպեսզի տվյալ անձն ունենա բարձրագույն իրավաբանական կրթություն, կամ էլ իրավաբանի մասնագիտությամբ գիտական աստիճան և իրավաբանի մասնագիտությամբ առնվազն 2 տարվա ստաժ: Այնուհետև հավակնորդը սահմանված կարգով հանձնում է որակավորման քննություն, բավարար արդյունքի դեպքում ստանում համապատասխան արտոնագիր:

Արտոնագիր ստանալու համար հավակնորդը որակավորման հանձնաժողով է ներկայացնում՝

- դիմում.
- անձը հաստատող փաստաթղթի պատճեն.
- ինքնակենսագրական տվյալներ պարունակող թերթիկ.
- աշխատանքային գրքույկի պատճեն.
- բարձրագույն իրավաբանական կրթությունը, կամ իրավաբանի մասնագիտությամբ գիտական աստիճանի վկայությունը հաստատող փաստաթղթերի պատճենները.
- ինչպես նաև օրենքով նախատեսված այլ փաստաթղթեր:

Որակավորման հանձնաժողովը երկամսյա ժամկետում ստուգում է հավակնորդների ներկայացրած փաստաթղթերի հավաստիությունը: Որակավորման քննություններն անցկացվում են տարին մեկ անգամ, այն բաղկացած է գրավոր փուլից՝ թեստավորումից, և բանավոր հարցազրույցից: Որակավորման քննության արդյունքները կարող են բողոքարկվել դատարան:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը նշում է, որ արտոնագիր ստանալով՝ որպես փաստաբան կարող են հանդես գալ դատախազը, նոտարը, կամ քննիչը, ոչ պետական, պետական ինքնակառավարման մարմնի, կամ կազմակերպության բարձրագույն իրավաբանական կրթություն պահանջող պաշտոններում աշխատող իրավաբանները, իրավունքի բնագավառի կրթական հաստատություններում աշխատողները, կամ փաստաբանի փորձնակը:

Սակայն օրենքն առանձնացնում է առնվազն 15 տարվա աշխատանքային ստաժ ունեցող դատավորին և փաստաբանին, որոնք միայն ցանկության դեպքում, առանց որակավորման քննություն հանձնելու և համապատասխան վկայագիր ստանալու, կարող են ստանալ փաստաբանական գործունեության արտոնագիր:

Որակավորման քննությունների անցկացումն ինքնանպատակ չէ: Այն անցկացվում է փաստաբանական գործունեություն իրականացնելու հավակնորդների գիտելիքները և մասնագիտական ունակությունները պարզելու համար: Մասնագիտական ստաժ ունենալը դեռևս չի նշանակում, որ տվյալ անձը լրիվ տիրապետում է իրավաբանական գիտելիքներին: Այսօրվա դրությամբ օրենքներն ու օրենսգրքերը բավականին արագ են փոփոխվում և շատ հնարավոր է, որ բարձրագույն իրավաբանական կրթությունը նոր ավարտած և մասնագիտական 2 տարվա ստաժ ունեցող անձը ավելի լավ տիրապետի ներկա օրենսդրությանը, քան 15 տարվա ստաժ ունեցող դատավորը կամ փաստաբանը: Այդ իսկ պատճառով էլ, բոլոր դեպքերում անհրաժեշտ է անցկացնել որակավորման քննություններ՝ ապահովելով փաստաբան դառնալու իրավունք ունեցող հավակնորդների հավասարությունը:

*Փաստաբանի գործունեության արտոնագիր տրամադրելու կարգը.*

Փաստաբանական գործունեության արտոնագիր ստանալու համար հավակնորդը փաստաբանների պալատ է ներկայացնում դիմում՝ փաստաբանների պալատին անդամագրվելու խնդրանքով: Դիմումը փաստաբանների պալատի խորհրդի կողմից քննարկվում և մեկամսյա ժամկետում դրա վերաբերյալ որոշում է կայացվում:

Հավակնորդների ներկայացրած դիմումը կարող է մերժվել, եթե՝

- տվյալ անձը դատարանի վճռով ճանաչվել է անգործունակ.
- դատապարտվել է դիտավորությամբ կատարված հանցագործության համար, և նրա դատվածությունը մարված կամ հանված չէ:

Դիմումը մերժելու դեպքում մեկամսյա ժամկետում այն կարող է բողոքարկվել դատական կարգով: Հավակնորդը դիմումը մերժելուց մեկ տարի հետո կարող է նոր դիմում ներկայացնել: Դիմումն ընդունելուց հետո փաստաբանների պալատին անդամագրված անձը հնգօրյա ժամկետում ստանում է փաստաբանների պալատի կնիքով և նախագահի ստորագրությամբ վավերացված արտոնագիր, որը տրվում է անժամկետ և առանց տարիքային սահմանափակման:

Փաստաբանության մասին ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ փաստաբանների պալատի խնդիրներից է փաստաբանության հեղինակության բարձրացման համար միջոցներ ձեռնարկելը:

Կարծում եմ, որ փաստաբանների հեղինակությունը մեծ չափով կապված է նրանց անընդհատ հարստացող գիտելիքների հետ: Եվ որպեսզի փաստաբանը շահագրգռված լինի մշտապես կատարելագործել իր գիտելիքները, կարծում եմ, որ փաստաբանի արտոնագիրը չպետք է տրվի անժամկետ, այլ անհրաժեշտ է սահմանել հստակ ժամկետ, որից հետո, եթե փաստաբանը ցանկանում է շարունակել իր փաստաբանական գործունեությունը, ապա նորից հանձնի որակավորման քննություն: Ըստ իս, այս միջոցը արդյունավետ է և մեծ չափով կարող է նպաստել հասարակության մեջ որակյալ փաստաբանների ավելացմանը:

*Արտոնագրի գործողության դադարեցումը.*

Օրենքով ամրագրված են այնպիսի դեպքեր, որոնց առկայությամբ դադարեցվում է փաստաբանների արտոնագրի գործողությունը: Այդ դեպքերն են՝

1. փաստաբանների պալատի նախագահին փաստաբանի գրավոր դիմում ներկայացնելը.
2. օրենքի պահանջի խախտմամբ արտոնագիր ստանալը.
3. տարվա ընթացքում երեք կամ ավելի անգամ կարգապահական տույժի ենթարկվելը.

4. մահը, կամ դատարանի վճռով մահացած ճանաչվելը.
5. որակավորման հանձնաժողովին կեղծ տվյալներ ներկայացնելը.
6. դատարանի վճռով անգործունակ, կամ սահմանափակ գործունակ ճանաչվելը, դիտավորությամբ կատարած հանցագործության համար դատապարտվելը.
7. արտոնագրի գործողության կասեցման ժամկետի լրանալը:

Նշված հիմքերով արտոնագրի գործողությունը դադարեցվում է փաստաբանների պալատի խորհրդի կողմից և ճանաչվում ուժը կորցրած: Սակայն փաստաբանին հնարավորություն է տրվում արտոնագրի՝ ուժը կորցրած լինելու մասին որոշումը, մեկամսյա ժամկետում բողոքարկել դատական կարգով: Իսկ արտոնագրի գործողությունը դադարեցնելուց առնվազն երկու տարի անց փաստաբանն իրավունք ունի դիմում ներկայացնել նոր արտոնագիր ստանալու համար:

Ինչ վերաբերում է օտարերկրացի փաստաբանին, ապա նրա փաստաբանական գործունեության իրավունքը դադարեցվում է այն երկրում, որտեղ ստացել է փաստաբանական գործունեություն իրականացնելու թույլտվություն: Դադարեցումից հետո նա չի կարող փաստաբանական գործունեություն իրականացնել Հայաստանի Հանրապետությունում:

Այս առնչությամբ կարելի է ասել, որ Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական գործունեություն իրականացնելու իրավունք ունի միայն այն օտարերկրացի փաստաբանը, որը փաստաբանական գործունեություն իրականացնելու արտոնագիր ստացել է իր երկրում:

Կարծում եմ, որ օտարերկրացիներին նույնպես կարելի է տալ հնարավորություն Հայաստանի Հանրապետությունում արտոնագրվելու համար, քանի որ օրենքում հստակ նշված է, որ փաստաբանական գործունեությունն անկախ ինստիտուտ է, չի մտնում որևէ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգի մեջ, հետևաբար որպես ազատ գործունեության ձև փաստաբանների պալատի կազմում կարելի է չբացառել նաև օտարերկրացի և քաղաքացիություն չունեցող անձանց արտոնագրումը:

**Հանրային պաշտպանության հասկացությունը**

Փաստաբանն իր մատուցած ծառայության դիմաց ստանում է փոխհատուցում, որի չափը և կարգը սահմանվում է վստահորդի և փաստաբանի միջև կնքված գրավոր պայմանագրով: Սակայն պետությունը երաշխավորում է անվճար իրավաբանական օգնությունը միայն քրեական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերով նախատեսված դեպքերում: Անվճար իրավաբանական օգնությունը ապահովում է պետությունը, որը կազմակերպում և իրականացնում է փաստաբանների պալատը: Հենց այդ իրավաբանական օգնությունն էլ համարվում է

հանրային պաշտպանություն: Պետությունը քրեական գործերով երաշխավորում է այն իրավաբանական օգնությունը, որի ժամանակ պաշտպանության կարիք ունեցող անձը գտնվում է նյութական անապահովության վիճակում: Քաղաքացիական դատավարության ժամանակ անվճար իրավաբանական օգնությունը սահմանվում է՝

1. ալիմենտի գանձման վերաբերյալ գործերով,
2. խեղման, կամ առողջությանն այլ վնաս պատճառելու, ինչպես նաև կերակրողի մահվան հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման վերաբերյալ գործերով:

Բայց, քանի որ իրավաբանական գործունեության ընթացքում փաստաբանը օգնություն է տրամադրում ոչ միայն քաղաքացիներին, այլ նաև իրավաբանական անձանց, ուստի ենթադրում եմ, որ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածում, որտեղ նշված են քաղաքացիական գործերով անվճար իրավաբանական օգնության տրամադրման դեպքերը, կարելի է ավելացնել նաև իրավաբանական անձի սնանկ ճանաչվելու ժամանակ պարտատերերի պահանջների բավարարման վերաբերյալ գործերով անվճար իրավաբանական օգնության տրամադրման հնարավորությունը:

Անվճար իրավաբանական օգնությունն ապահովում է պետությունը, որը կազմակերպում և իրականացնում է փաստաբանների պալատը՝ հանրային պաշտպանի գրասենյակի միջոցով:

***Հանրային պաշտպանը և նրա գործունեության փոխհատուցումը.***

Հանրային պաշտպանը հանրային պաշտպանի գրասենյակում աշխատող այն փաստաբանն է, որը գործում է հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի ներկայացմամբ: Հանրային պաշտպանը սկսում է իր գործունեությունը՝ հիմք ընդունելով փաստաբանների պալատի նախագահի հետ կնքած աշխատանքային պայմանագիրը:

Հանրային պաշտպանի ինստիտուտն իր իրականացրած գործունեության դիմաց ֆինանսավորվելով պետության կողմից՝ արդեն իսկ կախում է ձեռք բերում նրանից և կորցնում իր անկախությունը: Այսինքն կարելի է ասել, որ ինչ-որ չափով խախտվում է փաստաբանական գործունեության անկախության սկզբունքը:

Կարծում եմ, որ հանրային պաշտպանի ինստիտուտն այնքան էլ չի պաշտպանում անձի իրավունքներն ու օրինական շահերը, քանի որ հանրային պաշտպանը գիտակցելով, որ իր կատարած աշխատանքի համար վարձատրում է պետությունը, այլ ոչ թե նա, ում շահերն է ներկայացնում, ուստի կարող է այնքան էլ շահագրգռված չլինել գործի ելքով: Հանրային պաշտպանի միջոցով անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը կլինի ավելի արդյունավետ, եթե այն իրականացվի այլ կերպ: Մասնավորապես, եթե հանրային պաշտ-

պանն անվճար իրավաբանական օգնություն է տրամադրում և դրա դիմաց վարձատրվում է պետական բյուջեի հաշվին, ապա կարելի է ուղղակի այդ գումարը տրամադրել անձին, ում իրավունքները խախտվել են, նա էլ իր ցանկությամբ ընտրի իր փաստաբանին:

Չնայած ըստ իս՝ այնքան էլ կարևոր չէ հանրային պաշտպանի ինստիտուտը (արդյունավետ չլինելու պատճառով), բայց քանի որ այն հստակ սահմանված է օրենքով, կարծում եմ, որ անվճար իրավաբանական օգնությունը պետք է տարածել նաև վարչական դատավարությունում:

# Եզրափակիչ մաս

Ամփոփելով «Փաստաբանություն. ներկա վիճակը և զարգացման հեռանկարները» թեմայով զեկույցը, հանգում եմ այն եզրակացության, որ փաստաբանական գործունեությունը ծագում առնելով վաղ ժամանակներից, աստիճանաբար զարգանալով և փոփոխվելով, հասել է բավականին զարգացած մակարդակի:

Փաստաբանության շնորհիվ է, որ քաղաքացիները և իրավաբանական անձինք օրենքով սահմանված կարգով օգտվելով փաստաբանների մատուցած ծառայություններից կարողանում են պաշտպանել իրենց իրավունքներն ու օրինական շահերը:

Փաստաբանությունն այժմ մեծ տեղ է զբաղեցնում հասարակության մեջ և գնալով ավելի շատ է զգացվում որակյալ փաստաբանների կարիքը, ուստի որպես զարգացման հեռանկարներ ունեցող անկախ և ինքնակառավարվող գործունեության ձև, այն ունի որոշ թերություններ, որն էլ կարծում եմ, կլրացվի ժամանակի ընթացքում, եթե ապահովվի պետության միջամտությունից անկախ փաստաբանական գործունեության ազատ մրցակցությունը:

## Օգտագործված գրականության ցանկ


1. ՀՀ Սահմանադրություն, ընդունված 05.07.1995թ. (27.11.2005թ. փոփոխություններով):
2. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենք, ընդունված 14.12.2004թ. (փոփոխություններով և լրացումներով, 26.12.2008թ.):
3. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, ընդունված 01.07.1998թ. (փոփոխություններով և լրացումներով, 04.12.2008թ.):
4. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, ընդունված 17.06.1998թ. (փոփոխություններով և լրացումներով, 06.02.2009թ.):
5. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, ընդունված 23.09.2003թ.:

*ՏԱԹԵՎԻԿ ԴԱԼԼԱՔՅԱՆ*

# Ներածություն

Դատական պաշտպանության և իրավաբանական օգնություն ստանալու իրավունքներն իրացվում են նաև քաղաքացիական դատավարությունում, այդ թվում՝ դատարանում՝ ներկայացուցչի միջոցով դատավարական գործողություններ կատարելով: Դատական ներկայացուցչի մասնակցությունը քաղաքացիական դատավարությունում նպաստում է գործով օբյեկտիվ և արդարացի որոշում կայացնելուն: Դատական ներկայացուցչությունը հանդիսանում է քաղաքացու՝ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի իրականացման երաշխիքը: ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված է, որ յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք:

Քաղաքացիական դատավարական ներկայացուցչության ինստիտուտը քաղաքացիական գործերով արդարադատության իրականացման ոլորտում ժողովրդավարության արտահայտման ձևերից մեկն է: Այն քաղաքացիների և իրավաբանական անձանց քաղաքացիական իրավունքների, ազատությունների ու օրինական շահերի պաշտպանության, ինչպես նաև նրանց դատավարական իրավունքների և պարտականությունների արդյունավետ իրականացման միջոց է:

Հատկապես, փաստաբանի մասնակցությունը քաղաքացիական դատավարությանը, ավելի արդյունավետ կդարձնի քաղաքացիների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, կնպաստի դատական սխալների նվազմանը, գործով արդարացի որոշում կայացնելուն և դեպի արդարադատությունը ժողովրդի վստահության ամրապնդմանը:

## «Դատական ներկայացուցչություն» ինստիտուտի պատմական զարգացումը

Հայաստանի Հանրապետության արդի քաղաքացիական դատավարության իրավունքի և մասնավորապես՝ քաղաքացիադատավարական ներկայացուցչության ինստիտուտի գիտական ուսումնասիրությունը և հետագա զարգացումն օբյեկտիվորեն անհնար է առանց նրա պատմական արմատների, զարգացման փուլերի իմացության: Ուսումնասիրելով ներկայացուցչության ինստիտուտին վերաբերող գիտական աշխատությունները մենք եկանք այն համոզմանը, որ դատական ներկայացուցչության ինստիտուտը գոյություն է ունեցել դեռևս հին ժամանակներից:

Դատական ներկայացուցչությունը՝ որպես առանձին ինստիտուտ, գոյություն է ունեցել դեռևս Հին Հռոմում: Հռոմեական իրավունքը նախատեսում էր անձանց որոշակի շրջանակ, որոնք համարվում էին սահմանափակ գործունակ և զրկված էին ներկայացուցչություն իրականացնելու իրավունքից՝ հոգևորականները, առաջին երեք դասի պետական պաշտոնյաները, բարձրաստիճան կայսերական պաշտոնյաները, զինվորները, կանայք, խայտառակված, ոչ բարի համբավ ունեցող անձինք[5]:

Մխիթար Գոշն իր Դատաստանագրքում սահմանափակվում է միայն օրինական (պարտադիր) ներկայացուցչության որոշակի դեպքերի նախատեսմամբ՝ ընդհանրապես չանդրադառնալով կամավոր, պայմանագրային ներկայացուցչությանը[6]: Սմբատ Սպարապետը պարտադիր ներկայացուցչության յուրահատուկ տեսակ նախատեսում է այն դեպքերը, երբ կանանց վկայությունը դատարանում հաղորդվում էր վստահելի անձանց միջոցով:

1765թ. Եկատերինա 2-րդի հրովարտակով թույլատրվեց ստեղծել «Աստրախանի Հայոց Դատաստանագիրքը»: Հայ իրավունքի պատմության ընթացքում առաջին անգամ դատավարական ներկայացուցչության ինստիտուտն ամրագրվելով առանձին գլխում գտավ իր օրենսդրական ձևակերպումը: Հայ իրավունքի պատմության ընթացքում առաջին անգամ Դատաստանագրքի Գ մասի 5-րդ գլխում խոսք է գնում հիմնականում կամավոր, պայմանագրային ներկայացուցչության մասին:

1864թ. Քաղաքացիական դատավարության կանոնադրությունը ներկայացուցիչներին տարանջատում էր կամավորի և պարտադիր կամ օրինականի՝ ի դեմս հավատարմատարների, խնամակալների և հոգաբարձուների:

1923թ. ՀՍՍՀ Քաղաքացիական դատավարության օրենսգիրքը Դատական ներկայացուցչությունը թույլատրում էր բոլոր քաղաքացիական գործերով՝ ինչպես առաջին ատյանի, այնպես էլ վճռաբեկ ատյանի դատարանում, նույնիսկ օրինական ուժի մեջ մտած վճիռների ու որոշումների դատական հսկողության կարգով վերանայման ժամանակ[7]:

Շահամիր Շահամիրյանը իր «Որոգայթ փառաց» աշխատությունում ևս անդրադարձ է կատարել դատական ներկայացուցչության ինս-

---

[5] Տե՛ս Ա.Ռ. Պողոսյան: «Ներկայացուցչությունը քաղաքացիական դատավարությունում»: Երևան, 2003թ., էջ 44:

[6] Տե՛ս Է.Վ. Պողոսյան: «Հայաստանի պետության և իրավունքի պատմություն»: Երևան, 2005թ., էջեր 203-204:

[7] Տե՛ս Ա.Ռ. Պողոսյան: «Ներկայացուցչությունը քաղաքացիական դատավարությունում»: Երևան, 2003թ., էջեր 213-214, 227-229:

տիտուտին: «Ամեն մի հանդիմանող, ով իր դեմ գանգատ ունի, պարտավոր է երաշխավորության համար ստորագրված թղթով որևէ մարդու, իբրև երաշխավորի, ներկայացնել դատաստան այն նկատառումով, որ եթե ամբաստանյալը փախչի, ապա երաշխավորը հանդես գա նրա փոխարեն» («Որոգայթ Փառաց», գլուխ 145): Շահամիր Շահամիրյանը, հետևելով միջնադարյան հայ իրավունքի ավանդույթներին, արգելում էր դատավարությանը որպես վկա կանանց և տերտերների մասնակցությունը, վերջիններս նաև չէին կարող դատարանում հանդես գալ որպես փոխանորդ (գլուխ 184): Փաստաբանի մասնակցությունը դատավարությանը պարտադիր չէր և կախված էր կողմի կամքից:

## Փաստաբանի՝ որպես ներկայացուցչի դերը քաղաքացիական դատավարությունում

Քաղաքացիների անձնական և ընտանեկան կյանքն անօրինական միջամտություններից, նրանց պատիվը, արժանապատվությունը և բարի համբավը, բնակարանի անձեռնմխելիությունը, աշխատանքի, հանգստյան, առողջության պահպանման իրավունքները, մտքի, խղճի և կրոնի ազատությունը, սեփականության և ժառանգման իրավունքը ոտնձգություններից պաշտպանելու սահմանադրական դրույթների իրացումը նշանակալի չափով ապահովվում է քաղաքացիական դատավարությունում՝ դատական ներկայացուցչության միջոցով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 39-րդ հոդվածի համաձայն քաղաքացիները կարող են դատարանում իրենց գործերը վարել անձամբ կամ իրենց ներկայացուցիչների միջոցով:

Դատական ներկայացուցչության ինստիտուտում զուգակցվում են՝

1. հարաբերությունները դատական ներկայացուցչի և վստահորդի միջև, որոնք հիմնված են պայմանագրի վրա և կարգավորվում են նյութական իրավունքի նորմերով,
2. հարաբերությունները դատական ներկայացուցչի և դատարանի միջև, որոնք միջնորդավորված են դատավարական իրավունքով, որը սահմանում է դատավարությանը ներկայացուցչի մասնակցության կարգը, ինչպես նաև այն ամենը, որով որոշվում են այն իրավունքների և պարտականությունների ծավալը, որոնք վերաբերվում են դատական ներկայացուցչի և դատարանի փոխհարաբերություններին, և ոչ թե վստահորդի[8]:

[8] Տե՛ս Л.В Туманова. “Гражданское процессуалньое право”. М., 2008 г., էջ 203:

Մեր օրենսդրությունը սահմանում է դատական ներկայացուցչության հետևյալ տեսակները՝ *օրինական, պայմանագրային և հասարակական ներկայացուցչություն:*

Օրինական ներկայացուցիչ հանդես են գալիս ծնողները, որդեգրողները, հոգաբարձուները, խնամակալները: Պայմանագրային ներկայացուցչության առաջացման հիմքը ներկայացուցչի և ներկայացվողի միջև կնքված պայմանագիրն է: Հասարակական ներկայացուցչությունը մեծ նշանակություն ունի աշխատողների, գյուտարարների, հեղինակների, նկարիչների իրավունքների պաշտպանության հարցում: Հիմնական պատճառը նման ներկայացուցչության առաջացման համար հանդիսանում է քաղաքացու անդամակցությունը այս կամ այն կազմակերպությանը: Հասարակական միավորումները պաշտպանում են քաղաքացիների ոչ բոլոր իրավունքները, այլ միայն նրանք, որոնք հանդիսանում են տվյալ կազմակերպության խնդիրներից[9]:

Պրակտիկայում հանդիպում են դեպքեր, երբ դատավարությանը մասնակցում են երկու ներկայացուցիչներ: Նման անհրաժեշտություն ծագում է այն դեպքում, երբ ներկայացվող անձը բնակվում է այլ վայրում կամ էլ գտնվում է երկարատև գործուղման մեջ արտասահմանում և նրա կողմից լիազորված անձը, որն օրենքով սահմանված կարգով իրականացնում է դատական ներկայացուցչություն, հարկ է համարում դիմել փաստաբանի օգնությանը, կամ երբ անչափահասների, անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձանց շահերը պարտադիր կերպով ներկայացնում են նրանց օրինական ներկայացուցիչները՝ ծնողները, որդեգրողները, խնամակալները կամ հոգաբարձուները, որոնք էլ իրենց հերթին գործի վարումը հանձնարարում են իրավաբանորեն առավել իրազեկ և հմուտ ներկայացուցիչներին (օրինակ՝ փաստաբաններին) [10]:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ և 17-րդ հոդվածների համաձայն փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն ուղղված է իրավաբանական օգնություն ստացողի հետապնդած օրինական շահերի իրականացմանը՝ օրենքով չարգելված միջոցներով և եղանակներով: Այս գործունեությունը ներառում է իր մեջ խորհրդատվություն, ներկայացուցչություն (ներառյալ դատական ներկայացուցչությունը), քրեական գործերով պաշտպանություն: Դատական ներկայացուցչությունը կամ քրեական գործերով պաշտպանությունը համարվում են ձեռնարկատիրական գործունեություն և իրականացվում են միայն փաստաբանի կողմից:

---

[9] Տե՛ս Ա.Հ. Դավթյան: «Քաղաքացիական դատավարություն»: Երևան 2007թ., էջ 66:

[10] Տե՛ս И.М. Ильинская, Л.Ф. Лесницкая. “Судебное представительство в гражданском процессе”. М., 1964г., էջ 39:

Որպես պայմանագրային ներկայացուցիչ՝ քաղաքացիական դատավարությունում մասնակցում են շատ հաճախ փաստաբանները: «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը նշում է, որ փաստաբանությունը հանդիսանում է քաղաքացիական հասարակության ինստիտուտ, չի մտնում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգի մեջ, գործում է անկախության, օրինականության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության հիման վրա: Իրավական օգնություն ստանալու նպատակով քաղաքացին կամ կազմակերպությունը պայմանագիր են կնքում փաստաբանի հետ: Օրենքը նշում է, որ մի շարք քաղաքացիական գործերով փաստաբանական օգնությունը ցույց է տրվում անվճար (ալիմենտային, խեղման կամ առողջությանը այլ վնաս պատճառելու, ինչպես նաև աշխատանքի հետ կապված՝ կերակրողին կորցնելու դեպքերում):

Գտնում ենք, որ անգործունակ, ոչ լրիվ գործունակ, սահմանափակ գործունակ, ինչպես նաև նյութապես անապահով քաղաքացիների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության գործում անկախ օրինական ներկայացուցչի մասնակցությունից (ովքեր չունեն իրավաբանական կրթություն և չեն օգտվում փաստաբանի ծառայությունից) անհրաժեշտ է համարել հանրային պաշտպանի մասնակցությունը: Ի տարբերություն փաստաբանի, ով իրավունքի ոլորտում հատուկ ունակություններով է օժտված, դատարանում գործեր վարելու պրակտիկ փորձ ունի, օրինական ներկայացուցիչը դատարանում գործեր վարելու պրակտիկ հմտություններ չունի և ինչն էլ չի նպաստի ներկայացվողի իրավունքների, օրինական շահերի պաշտպանությանը և կհանդիսանա անբարենպաստ դատական որոշում կայացնելու հիմք: Քաղաքացին իր սահմանադրական իրավունքը իրականացնելիս ազատ է ներկայացուցչի ընտրության հարցում: Սակայն այստեղ պետք է մի կարևոր պահանջ առաջադրվի ներկայացուցչին՝ ունենալ համապատասխան որակավորում և հատուկ պատրաստվածություն:

Ներկայացուցիչները դատավարական գործողություններ կատարելու համար ձեռք են բերում համապատասխան լիազորություններ (իրավունքներ): Օրինական, հասարակական ներկայացուցիչները, իրավաբանական անձի մարմինը, ներկայացուցչի լիազորությունները ձեռք են բերում օրենքի, կանոնադրության համապատասխան: Օրինական ներկայացուցչի լիազորությունները հաստատում են Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի վկայականը կամ խնամակալության և հոգաբարձության մարմինների կողմից տրված լիազորագիրը[11]:

Ներկայացուցիչն իր լիազորությունները իրականացնում է լիազորագրի հիման վրա: Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության

[11] Տե՛ս М.С. Шакарян. “Гражданское процессуалньое право России”. Москва, 1996 г, էջ 89:

օրենսգրքի 41-րդ հոդվածի քաղաքացու տված լիազորագիրը վավերացնում է նոտարը կամ օրենքով նման իրավասություն ունեցող պաշտոնատար անձը: Փաստաբանին լիազորագիրը տրվում է հասարակ գրավոր ձևով և վավերացման ենթակա չէ:

Օրենսդիրը, հաշվի առնելով դատական ներկայացուցչի ինստիտուտի կարևորությունն արդարադատություն իրականացնելու ոլորտում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում առանձին գլուխ է տրամադրել այս ինստիտուտին («Դատական ներկայացուցչություն», գլուխ 6) և ընդամենը ամրագրելով 39-43-րդ հոդվածներում սահմանափակվել: Մենք կարծում ենք, որ նման կարևորագույն ինստիտուտի ամրագրումը մի քանի հոդվածներում ճիշտ չէ և անհրաժեշտ է տվյալ գլուխը ենթարկել բազմակողմանի փոփոխությունների:

Կարծում ենք, կարևոր քայլ էր, երբ ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 40-րդ հոդվածում կատարվեց մեկ կարևոր փոփոխություն, որի հետևանքով ուժը կորցրած ճանաչվեց «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 29.1. հոդվածը: Նախկինում այս հոդվածը շարադրված էր հետևյալ բովանդակությամբ՝ **«Առաջին ատյանի դատարանում և վերաքննիչ դատարանում ներկայացուցիչ կարող է լինել ցանկացած քաղաքացի, որն ունի դատարանում գործը վարելու պատշաճ ձևակերպված լիազորություն: Վճռաբեկ դատարանում ներկայացուցիչ կարող է լինել վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ փաստաբանը»:** Իսկ այժմ նույն հոդվածը շարադրվել է հետևյալ կերպ՝ **«դատարանում ներկայացուցիչ կարող է լինել ցանկացած քաղաքացի, որն ունի դատարանում գործը վարելու պատշաճ ձևակերպված լիազորություն»:** Հետևապես, այս փոփոխությունը կարծում ենք կարևոր քայլ էր մարդու իրավունքների պաշտպանության հարցում:

Անհրաժեշտ ենք համարում, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում, որպես լրացում, տրվի ներկայացուցչի հստակ սահմանումը: Այսպես, դատական ներկայացուցիչն իր լիազորությունների սահմաններում դատավարական գործողություններ է կատարում վստահորդի անունից և հօգուտ նրա շահերի, ինչպես նաև աջակցում դատարանին գործով արդարացի որոշում կայացնելուն:

Մենք անհրաժեշտ ենք համարում նաև քաղաքացիական դատավարական ներկայացուցչության ոլորտում ներմուծել «փաստաբանական մենաշնորհը», այսինքն վստահորդների իրավունքների, ազատությունների ու օրինական շահերի պաշտպանության իրավունքը միմիայն վերապահելով փաստաբաններին՝ ավելի արդյունավետ կպաշտպանվեն վստահորդների շահերը և ավելի որակյալ իրավաբանական օգնություն կցուցաբերվի նրանց:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում կարևոր է ամրագրել նաև նորմ դատական լիազորագրի վերաբերյալ, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը չի կարգավորում հարցերը կապված դատարանում գործերը վարելու լիազորագրի վերաբերյալ, այդպիսի լիազորագրի ձևերը, վավերացման պայմանները, գործողության ժամկետները, նրա բովանդակությունը:

Դատական ներկայացուցչի պատասխանատվությունը դատավարական պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դիմաց պետք է կարգավորվի օրենքով:

## Եզրափակիչ մաս

Տնտեսական առաջընթացը, բարդ տնտեսական հարաբերությունները, հասարակության անդամների միջև ծագած իրավահարաբերությունների բազմազանությունը, կարծում եմ, պետք է հիմք հանդիսանան, որ օրենսդիրը որոշակի միջոցներ ձեռնարկի, որոնք կնպաստեն այս ինստիտուտի լիարժեք իրականացմանը և խուսափելու դատական սխալներից:

Սահմանադրական երաշխիքը կապված որակյալ իրավական օգնություն ստանալու հետ նպաստում է, որ յուրաքանչյուր շահագրգիռ անձ կարողանա պաշտպանել իր իրավունքները դատական կարգով: Հետևաբար, ելնելով սահմանադրական նման երաշխիքից, բացահայտվում է դատական ներկայացուցչության էությունը, կարևորությունը և համարվում է քաղաքացու իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոց: Քաղաքացու իրավունքների պաշտպանության երաշխավոր է հանդիսանում փաստաբանը, ով նաև որպես ներկայացուցիչ է հանդես գալիս դատարանում:

Դատական ներկայացուցչության ինստիտուտը հանդիսանում է այն կարևորագույն հիմնասյուներից մեկը, որի հիման վրա պետք է կառուցվի արդարադատությունը: Այս ինստիտուտի թերի օգտագործումը ոչ միայն չի նպաստի արդարադատության իրականացմանը, այլև խոչընդոտ կհանդիսանա վերջինիս հետագա ամրապնդմանը:

## Օգտագործված գրականության ցանկ

*Նորմատիվ իրավական ակտեր*


1. ՀՀ Սահմանադրություն, ընդունված 05.07.1995թ. (27.11.2005թ. փոփոխություններով):
2. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենք, ընդունված 14.12. 2004թ. (փոփոխություններով և լրացումներով, 26.12.2008թ.):
3. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, ընդունված 17.06.1998թ. (փոփոխություններով և լրացումներով, 06.02.2009թ.):


*Մասնագիտական գրականություն*


1. Ա. Հ. Դավթյան: «Քաղաքացիական դատավարություն», Երևան, 2007թ.:
2. Շ. Շահամիրյան: «Որոգայթ փառաց», Երևան, «Հայաստան» հրատ., 2002թ.:
3. Ա. Ռ. Պողոսյան: «Ներկայացուցչությունը քաղաքացիական դատավարությունում», Երևան, 2003թ.:
4. Է. Վ. Պողոսյան: «Հայաստանի պետության և իրավունքի պատմություն», Երևան, 2005թ.:
5. И. М. Ильинская, Л. Ф. Лесницкая. “Судебное представительство в гражданском процессе”. Москва, 1964г.:
6. Л. В. Туманова. “Гражданское процессуалньое право”. Москва, 2008г.:
7. М.С. Шакарян. “Гражданское процессуалньое право России”. Москва, 1996г.:

*ԼՈՒՍԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

# Ներածություն

Յուրաքանչյուր քաղաքացի, ելնելով իր իրավագիտակցությունից, կուլտուրայից, կրթությունից, դաստիարակությունից, բնավորության գծերից, հանգամանքներից, ապրում և գործում է հասարակությունում՝ մնալով օրենքի շրջանակներում: Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության՝ պետությունը երաշխավորում է մարդու և քաղաքացու իրավունքների, ազատությունների ու օրինական շահերի պաշտպանությունը, նրա իրավունքների սահմանափակման կամ խախտման դեպքում՝ դատական ատյաններ դիմելու հնարավորությունը: Իրավական խնդիրների օրինական և արդարացի լուծման ճանապարհը գտնելու գործում, այս կամ այն իրավիճակում կողմնորոշվելու, իրավունքի գործող նորմերի հիման վրա որակյալ իրավաբանական օգնություն ցույց տալու նպատակով էլ կյանքի է կոչվել փաստաբանությունը:

Փաստաբանությունը՝ որպես իրավական ինստիտուտ, իր ձևավորումը սկսեց Հին Հռոմում: Այստեղ նախքան միապետության ժամանակաշրջանը քաղաքացիներն ունեին լայն դատավարական իրավունքներ և կարող էին ստանալ մասնագիտական իրավաբանական օգնություն: Արդյունքում պաշտպանությունը փոխադրվեց իրավական ոլորտ, և հիմք դրվեց փաստաբանությանը:

Հայաստանում փաստաբանությունն ունի հին արմատներ: Այս ինստիտուտն իր ամրագրումն է ստացել «Որոգայթ փառաց» սահմանադրական նախագծում:

Շ. Շահամիրյանի «Որոգայթ փառաց» սահմանադրական նախագծում փաստաբանության ինստիտուտն ավելի վաղ էր ամրագրվել, բայց նախագիծը կյանքի չկոչվեց, ուստի, որպես ժամանակակից փաստաբանական ինստիտուտի մոդել ընդունված է համարել ֆրանսիական և անգլիական նախատիպը:

Փաստաբանությունը ինքնանպատակ ստեղծված ինստիտուտ և պետական համակարգի կցորդ չէ: Դրա ստեղծումը պայմանավորված է հասարակական անհրաժեշտությամբ, որն էլ հիմք է հանդիսացել փաստաբանության ձևավորման և հետագա զարգացման համար: Փաստաբանությունը միշտ եղել և մնում է քաղաքացիական հասարակության ինստիտուտ, որի առաքելությունն է հանդիսանում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, ինչպես նաև աջակցությունն արդարադատության իրականացման հարցում:

Այսպիսով, մերօրյա դատական համակարգն անհնար է պատկերացնել առանց փաստաբանության: Ինչպես ողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում զարգացած փաստաբանական ինստիտուտն իրավական պետության կարևոր հենասյուներից մեկն է:

## Փաստաբանության և փաստաբանական գործունեության էությունը, նպատակները և խնդիրները: Փաստաբանի իրավական կարգավիճակը

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ նախատեսված է, որ «Յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով նախատեսված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում անվճար»:

Փաստաբանությունը դասվում է հնագույն իրավական ինստիտուտների շարքին: Այն առաջացել է Հին Հռոմում և իր զարգացումն ապրել պատմական բավական երկար ժամանակաշրջանի ընթացքում: «Փաստաբանություն» (ադվոկատուրա) տերմինը ծագել է լատիներեն advocare կամ advocates արմատից, որը նշանակում է «կոչված» կամ «կանչված»:

Փաստաբանության՝ որպես պաշտպանության սաղմեր, ի հայտ են եկել այն ժամանակ, երբ առկա է եղել հարձակում, բռնություն կամ վտանգ, այսինքն՝ գրեթե այն ժամանակ, երբ մարդը հանդիսանում էր կենսաբանական, այլ ոչ թե՝ սոցիալական էակ: Փաստաբանությունն առաջացավ պետության կողմից պաշտոնապես ճանաչում ստանալուց հետո: Ուստի կարելի է ասել, որ այն ծնունդ առավ ժողովրդի մեջ, նրա կյանքում, հասարակությունում, իսկ ձևավորվեց որպես այդպիսին պետության կողմից:

Փաստաբանությունը հանրային, իրավական ինստիտուտ է: Այս ինստիտուտի առկայությունը հնարավորություն է ընձեռում պահպանել հավասարակշռություն հասարակության, պետության և անձանց (ֆիզիկական, իրավաբանական) շահերի միջև:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ «Փաստաբանությունը փաստաբանների մասնագիտական միավորում է, որը հանդիսանալով քաղաքացիական հասարակության ինստիտուտ, չի մտնում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգի մեջ:

Փաստաբանությունը գործում է անկախության, օրինապահության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության սկզբունքների հիման վրա»:

Փաստաբանության ինստիտուտի դերն ու նշանակությունը պայմանավորված է կոնկրետ հասարակության զարգացման մակարդա-

կով, ինչպես նաև իրավապաշտպան գործունեության նկատմամբ հասարակության անդամների ու պետության վերաբերմունքով: Փաստաբանության ինստիտուտը լիարժեք կարող է գործել միայն ժողովրդավարական պետության պայմաններում, երբ հռչակված ու երաշխավորված է մարդու իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը: Փաստաբանությունը իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն ուղղված է իրավաբանական օգնություն ստացողի հետապնդած օրինական շահերի իրականացմանը՝ օրենքով չարգելված միջոցներով և եղանակներով:

Փաստաբանության հիմնական նպատակներն են՝

- քաղաքացիական հասարակության և իրավունքի գերակայության ամրապնդումը, օրենքի տառի և ոգու, այսինքն՝ օրինականության պահպանման ապահովումը,
- վստահորդների շահերի պաշտպանությունը, նրանց որակյալ իրավաբանական օգնության տրամադրումը օրենսդրության, բարոյական և էթիկական նորմերի շրջանակներում:

Փաստաբանության խնդիրներն են՝

- իրավաբանական օգնություն ցույց տալու միջոցով ապահովել ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների ու օրինական շահերի համակողմանի պաշտպանությունը,
- օժանդակել օրինականության պահպանմանն ու ամրապնդմանը,
- նպաստել քաղաքացիների իրավագիտակցության բարձրացմանը, դաստիարակել նրանց օրենքների ճշգրիտ և անշեղ կատարման ոգով,
- հարգել այլ անձանց իրավունքները, ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը:

Փաստաբանության նպատակներից և խնդիրներից երևում է, որ դրանց իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել ինչպես անհատի, այնպես էլ ողջ հասարակության շահերի պաշտպանությունը: Ուստի, մասնավոր և հանրային շահերի համատեղումը դառնում է փաստաբանական գործունեության գլխավոր ֆունկցիաներից մեկը:

Փաստաբանության՝ որպես քաղաքացիական հասարակության ինստիտուտի կազմակերպման և գործունեության հիմքում, ընկած են մի շարք հիմնարար և ղեկավար դրույթներ, որոնք կանխորոշում են դրա ժողովրդավարական բնույթը:

Փաստաբանության գործունեության հիմքում ընկած է օրինականության սկզբունքը: Փաստաբանի կողմից իրականացվող գործունեության ընթացքում օրինականության պահանջների պահպանումը կարևորվում է այն հանգամանքով, որ նա կոչված է իրավաբանական օգնություն ցույց տալ դրա կարիքը ունեցող անձանց: Փաստաբանը

պարտավոր է պահպանել օրենքի բոլոր պահանջները, գործել օրենքով չարգելված միջոցներով ու եղանակներով, հարգել ու չոտնահարել այլ անձանց օրենքով պաշտպանվող իրավունքներն ու շահերը: Օրինականության սկզբունքի խախտումը կարող է որոշակի անբարենպաստ հետևանքներ առաջացնել փաստաբանի համար, մասնավորապես, նա կարող է զրկվել արտոնագրից: Ցանկացած բնույթի իրավաբանական օգնություն ցույց տալով և անձի շահերը պաշտպանելով՝ փաստաբանը նպաստում է օրինականության պահպանմանը:

Փաստաբանական գործունեության մեջ օրինականության ապահովման կարևոր երաշխիք է նաև օրենքում տեղ գտած այն դրույթը, ըստ որի՝ փաստաբանն իրավունք չունի իրավաբանական օգնություն ստանալու համար դիմած անձի հանձնարարությունն ընդունելու, եթե այն ակնհայտ անօրինական բնույթ է կրում կամ վստահորդի հետ կնքված պայմանագրի առարկայի շուրջ ունի ինքնուրույն շահ, որը տարբերվում է տվյալ անձի հետապնդած շահից:

Փաստաբանության կազմակերպման և գործունեության հիմքում ընկած է անկախության սկզբունքը: Փաստաբանն իր գործունեությունն իրականացնելիս անկախ է, ղեկավարվում է միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով, փաստաբանի վարքագծի կանոնագրքով և փաստաբանների պալատի կանոնադրությամբ:

Փաստաբանությունը անկախ է բոլոր պետական մարմիններից՝ դատարանից, դատախազությունից, գործադիր իշխանության, ինչպես նաև մնացած բոլոր մարմիններից ու կազմակերպություններից, որոնց հետ փաստաբանները շփվում են իրենց իրավապաշտպան գործունեության իրականացման ընթացքում: Նշված մարմինների կողմից փաստաբանների նկատմամբ որևէ ներգործության բացառման կարևոր երաշխիք է այն, որ փաստաբանների պալատը փաստաբանների մասնագիտական, անկախ, ինքնակառավարվող միավորում է: Որևէ պետական կամ այլ մարմին չի կարող ղեկավարում իրականացնել փաստաբանների պալատի նկատմամբ:

Փաստաբանական գործունեության անկախության ապահովման կարևոր երաշխիք է նաև այն, որ փաստաբանը չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել օրենքով սահմանված պահանջներին համապատասխան իրականացրած ցանկացած գործողության, ներառյալ՝ իր մասնագիտական պարտականությունները բարեխիղճ կատարելիս դատարանում, հետաքննության, նախաքննության և այլ մարմիններում հայտնած կարծիքի և դիրքորոշման համար:

Փաստաբանների անկախությունը չպետք է հասկանալ բացարձակ իմաստով: Թեև պետությունը նրանց գործունեության նկատմամբ

հսկողություն չի իրականացնում, սակայն հետևում է, որ փաստաբանների պալատը և նրա անդամները գործեն օրենքի շրջանակներում:

Անկախության սկզբունքի իրականացման համար կարևոր երաշխիք է փաստաբանության ինքնակառավարումը: Դրա էությունը այն է, որ փաստաբանների միավորման կազմակերպմանն ու գործունեությանը վերաբերող բոլոր կարևոր և էական հարցերը փաստաբաններն ինքնուրույն են լուծում: Ինքնակառավարումը ենթադրում է համակարգի ներսում կազմավորվող ընտրովի մարմինների միջոցով պալատի առջև դրված խնդիրների իրականացում:

Փաստաբանների պալատի անդամներն իրենք են իրականացնում կառույցի կառավարումը, մասնակցելով դրա ղեկավար մարմինների ձևավորմանը և դրանց գործունեության նկատմամբ վերահսկողությանը: Որպես ինքնակառավարվող միավորում փաստաբանների պալատը չի ենթարկվում իր համակարգից դուրս գտնվող որևէ մարմնի, այն չունի վերադաս:

Փաստաբանության ժողովրդավարական բնույթն առավել վառ ընդգծվում է փաստաբանների իրավահավասարության սկզբունքի մեջ: Այս սկզբունքը նշանակում է, որ փաստաբանները չեն բաժանվում վերադասների և ստորադասների կամ ըստ դասային աստիճանի՝ ավագի և կրտսերի: Փաստաբանական գործունեություն չի համարվում աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող և ի շահ գործատուի գործող անձանց կողմից ցույց տրվող իրավաբանական օգնությունը:

Յուրաքանչյուր փաստաբան, փաստաբանության առջև դրված խնդիրներն իրականացնելիս, ունի մեկ ձայնի իրավունք՝ անկախ աշխատանքային ստաժից, տարիքից և այլ հատկանիշներից: Այս սկզբունքի իրականացման երաշխիք է օրենքում ամրագրված հետևյալ դրույթը՝ արգելվում է փաստաբանական գործունեության արտոնագիր ստանալու համար հավակնորդների նկատմամբ խտրականությունը՝ հավակնորդի ազգության, քաղաքացիության, ռասայի, սեռի, լեզվի, դավանանքի, քաղաքական կամ այլ հայացքների, սոցիալական ծագման, գույքային կամ այլ դրության հիմքով:

## Փաստաբանի իրավական կարգավիճակը

«Փաստաբան» բառացի նշանակում է «փաստեր բանեցնող»: Որոշ երկրներում փաստաբանը կոչվում է ադվոկատ՝ լատիներեն advocat բառից, որը նշանակում է «օգնության կանչված»: Պետք է ուշադրություն դարձնել «փաստաբան» և «ադվոկատ» բառերի իմաստային տարբերությանը: Բռնության և վտանգի հասարակությունում թույլը օգնություն էր խնդրում ուժեղից: Այսպիսով՝ «օգնության կանչ-

վածը» դառնում էր թույլի պաշտպանը: Իրավազուրկ հասարակության և բռնատիրական պետությունների փոխարեն այսօր ձևավորվում է քաղաքացիական հասարակություն և իրավական պետություն: Քաղաքացիական հասարակությունում փաստաբանը, հենվելով փաստերի վրա, պաշտպանում է իր վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը ոչ թե բռնատիրական կամայականությունների պայմաններում՝ օգտվելով ուժի հեղինակությունից, այլ իրավական օրենքների վրա հիմնվելով:

Փաստաբան-պաշտպանի ստեղծագործական մտածողությունը դրսևորվում է այնպիսի հատկությունների մեջ, ինչպիսիք են՝ ինքնուրույնությունը, ճկունությունը, որոնք անհրաժեշտ են գործի խրթին հանգամանքներում հմուտ ու խելացիորեն կողմնորոշվելու համար: Հսկայական թվով փաստերի մեջ նա պետք է կարողանա գտնել այնպիսիք, որոնք ժխտում են մեղադրանքը կամ ընձեռում են պատասխանատվությունը մեղմելու, հիմնականը երկրորդականից տարբերակելու հնարավորություն: Այս ամենը պահանջում է մտքի խորություն, հարցախուզություն, դիտողականություն, կայուն հիշողություն:

2004թ.-ի «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն. «Փաստաբան է համարվում այն անձը, որը սույն օրենքով սահմանված կարգով ստացել է փաստաբանական գործունեություն իրականացնելու արտոնագիր, փաստաբանների պալատի անդամ է և տվել է երդում: Փաստաբանը համարվում է իրավական հարցերով անկախ խորհրդատու: Փաստաբանն աջակցում է հասարակության մեջ իրավունքի գերակայության ամրապնդմանը, իրականացնում է օրինականության քարոզչություն՝ մարդու իրավունքներն ու ազատությունները հարգելու և միջազգային հանրաճանաչ նորմերը ամրապնդելու ուղղությամբ»:

Փաստաբանից պահանջվում է պաշտպանության համառ և հետևողական իրականացում: Պաշտպանի գործունեության մեջ էական դեր է խաղում նրա մասնագիտական էթիկան: Լինում են դեպքեր, երբ ամբաստանյալը փաստաբանի հետ անկեղծ զրույցի ժամանակ խոստովանել է իր կատարած հանցագործությունը, բայց դատարանում ժխտել է ամեն ինչ: Այդ հանգամանքը երբեմն պաշտպանի մոտ առաջացնում է ներքին կոնֆլիկտ:

Փաստաբանը կոչված է պաշտպանելու ոչ թե հանցագործությունը, այլ մարդուն, նրա իրավունքներն ու օրինական շահերը, կանխելու չհիմնավորված դատապարտումն ու անարդարացի պատիժը: Փաստաբանի մասնագիտական էթիկայի գործնական նշանակությունը պայմանավորվում է նրանով, որ նա օգտվում է դատական ամբիոնից, որը նրան հնարավորություն է ընձեռում ներազդելու մարդկային զանգվածի գիտակցության վրա: Այստեղից հետևություն՝ փաստաբանի բարոյական նկա-

ռագիրը և նրա արժեքային կողմնորոշումները ստանում են անմիջական հասարակական նշանակություն: Ա.Ֆ.Կոնին արդարացիորեն գտնում է, որ քրեական պաշտպանությունն ավելի շատ առիթներ է տալիս պահանջներ ներկայացնելու բարոյական ոլորտից, քան մեղադրողի գործունեությունը, և դա մեղադրյալի ու հասարակության միջև առաջացած բարդ ու բազմիմաստ հարաբերությունների պատճառով:

Իրավաբանական օգնություն ցույց տալու ժամանակ փաստաբանն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

- խորհրդատվություն է տրամադրում իրավական հարցերով ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր,
- կազմում է դիմումներ, բողոքներ, գանգատներ, միջնորդություններ և իրավական բնույթի այլ փաստաթղթեր, ինչպես նաև դրանց նախագծեր,
- որպես ներկայացուցիչ մասնակցում է քաղաքացիական դատավարությանը, մասնակցում է գործի քննությանը Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանում,
- որպես ներկայացուցիչ կամ պաշտպան մասնակցում է քրեական դատավարությանը և վարչական իրավախախտումների գործերով վարույթին,
- որպես վստահորդի ներկայացուցիչ մասնակցում է գործերի քննությանը միջնորդ դատարանում կամ վեճեր լուծող այլ մարմիններում,
- ներկայացնում է վստահորդի շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, հասարակական միավորումներում և այլ կազմակերպություններում, օտարերկրյա պետությունների պետական իշխանության մարմիններում, դատարաններում, հետաքննության կամ նախաքննության մարմիններում, օտարերկրյա պետությունների ոչ կառավարական մարմիններում, եթե այլ բան նախատեսված չէ տվյալ երկրի օրենսդրությամբ, միջազգային դատական մարմինների և այլ միջազգային կազմակերպությունների կանոնադրային փաստաթղթերով կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

Փաստաբանն իրավունք ունի ցույց տալու օրենքով չարգելված իրավաբանական այլ օգնություն:

Քաղաքացիական և քրեական դատավարությունում, ինչպես նաև վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթում՝ որպես վստահորդի ներկայացուցիչ կամ պաշտպան մասնակցող փաստաբա-

նի իրավունքները սահմանվում են օրենքով: Փաստաբանը, մասնավորապես, իրավունք ունի՝

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական և քրեական դատավարության օրենսգրքերով սահմանված կարգով ներկայացնելու կամ պաշտպանելու ֆիզիկական և իրավաբանական անձանց շահերը, ինչպես նաև ներկայացնելու վստահորդի շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, ոչ պետական մարմիններում և կազմակերպություններում.
- օրենքով սահմանված կարգով ձեռք բերելու և ներկայացնելու վստահորդի շահերից բխող ապացույցներ.
- դիմելու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններ կամ կազմակերպություններ՝ իրավաբանական օգնություն ցույց տալու համար անհրաժեշտ փաստաթղթեր ստանալու պահանջով.
- համաձայնության դեպքում գրավոր հարցման ենթարկելու անձանց, ովքեր ենթադրվում է, որ տիրապետում են գործին վերաբերող տեղեկատվությանը, որով փաստաբանն իրավաբանական օգնություն է ցույց տալիս.
- պայմանագրային հիմունքներով մասնագետներ ներգրավելու՝ իրավաբանական օգնություն ցույց տալու հետ կապված այլ մասնագիտական գիտելիքներ պահանջող հարցեր պարզաբանելու համար:

Պաշտպանելով, փաստաբանի իրավունքները, այժմ անդրադառնանք փաստաբանի պարտականություններին: Դրանք են՝

- մշտապես կատարելագործել իր գիտելիքները.
- ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը ՀՀ օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով.
- մուծել անդամավճարներ.
- պահպանել «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները.
- չհրապարակել փաստաբանական գաղտնիքը՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի.
- չկատարել վստահորդի շահերին հակասող որևէ գործողություն, չընդունել դիրքորոշում առանց նրա հետ համաձայնեցնելու՝ բացառությամբ այն դեպքերի, երբ փաստաբանը համոզված է պաշտպանյալի ինքնազրպարտության մեջ, հակառակ պաշտպանյալի դիրքորոշման՝ չընդունել դեպքի հետ նրա առնչությունը և մեղավորությունը:

Փաստաբանն իրավունք չունի իրավաբանական օգնություն ստանալու համար դիմած անձի հանձնարարությունն ընդունելու, եթե՝

- այն ակնհայտ անօրինական բնույթ է կրում,
- վստահորդի հետ կնքած պայմանագրի առարկայի շուրջ ունի ինքնուրույն շահ, որը տարբերվում է տվյալ անձի հետապնդած շահից:

Փաստաբանն իրավունք չունի իրավաբանական օգնություն ցույց տալու այն դեպքում, երբ՝

- առկա է հակասություն նույն հարցով իր կամ իր վստահորդի շահերի միջև,
- տվյալ գործին մասնակցել է որպես դատավոր, դատախազ, քննիչ, հետաքննության մարմնի աշխատող, փորձագետ, տուժող կամ վկա, ինչպես նաև, եթե նա հանդիսացել է պաշտոնատար անձ, որի իրավասության մեջ էր մտնում տվյալ անձի շահերից բխող որոշման ընդունումը,
- պետք է ներակայացնի վստահորդի շահերը որևէ գործում, և այդ անձի շահերը հակասում են նախկին վստահորդի շահերին՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նախկին վստահորդը տալիս է իր գրավոր համաձայնությունը:

Փաստաբանը չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել օրենքով սահմանված պահանջներին համապատասխան իրականացրած ցանկացած գործողության, ներառյալ իր մասնագիտական պարտականությունները բարեխիղճ կատարելիս, կամ թե՝ դատարանում, հետաքննության, նախաքննության և այլ մարմիններում հայտնած կարծիքի և դիրքորոշման համար:

Պետական իրավասու մարմինները պարտավոր են ձեռնարկել փաստաբանի պաշտպանության համար անհրաժեշտ՝ օրենքով սահմանված միջոցներ, եթե իր մասնագիտական պարտականությունների կատարման հետ կապված նրան կամ նրա ընտանիքի անդամներին սպառնացել են ֆիզիկական բռնությամբ, գույքի ոչնչացման կամ այլ անօրինական գործողություններով:

## Իրավունքի էթիկայի հասկացությունը: Փաստաբանի մասնագիտական էթիկայի հասկացությունը և սկզբունքները

Իրավունքի էթիկայի սկզբնաղբյուրները սկիզբ են առնում Հին Հունաստանի փիլիսոփայությունից, որն առաջացել է Ա. Ֆ. Լոսևի «Կալոգատիյա»՝ «հրաշալի-բարի» հին հունական բառի վերլուծության ժամանակ: էթիկայի հասկացությունն առաջացել է հուներեն ethos բառից և նշանակում է սովորույթ, բարոյական բնավորություն: Առաջին անգամ այն գործածվել է Արիստոտելի կողմից որպես «հետազոտության

հատուկ բնագավառի՝ գործնական փիլիսոփայության բնորոշում», քանի որ վերջինս փորձում է պատասխանել այն հարցին, թե ինչ պետք կատարենք: Իրավունքի էթիկայում սուբյեկտը հանդես է գալիս ոչ միայն որպես իր շահերի կրող, այլև նա հանդիսանում է իրավունքի արարիչը, իրավունքը համալրում է կոնկրետ բովանդակությամբ, մեկնաբանում, հաղորդում է այն, կարող է իրականացնել, փոփոխել կամ չճանաչել այն:

Օբյեկտիվ կողմնորոշված մոտեցմամբ մարդն ընկալվում է որպես կախյալ փոփոխական, որը որոշվում է կյանքի պայմաններով, իրավունքի մեջ դրված հնարավորություններով:

Իրավունքի առարկան գրականության մեջ դիտարկվում է երկու ընկալմամբ՝ լայն և նեղ: Լայն իմաստով իրավունքը ներառում է այնպիսի դրսևորումներ, ինչպիսիք են սովորույթը, կրոնը, բնական իրավունքը, պոզիտիվ իրավունքը, կենդանի իրավունքը: Նեղ իմաստով իրավունքը դիտարկվում է որպես պետության կողմից լուսաբանվող օրենքների և նորմերի ամբողջություն:

2004թ. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի համաձայն. «Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը սահմանում է փաստաբանի վարքագծի կանոնները և փաստաբանական էթիկայի սկզբունքները»: Առաջնային խնդիր է համարվում այն, որ փաստաբանը պետք է առավելագույնս օգտակար լինի իր վստահորդի համար: Փաստաբանը, անշուշտ, նախևառաջ առաջնորդվում է իր վստահորդի շահերով: Սակայն այստեղ ևս գոյություն ունեն բազմաթիվ սահմանափակումներ, որոնք պարտադրում են փաստաբանին հետևել վարքի որոշակի կանոնների: Օրինակ՝ վստահորդը ցանկանում է, որպեսզի փաստաբանը դատարանում պատասխանողին հիմար և անբարոյական մարդ ձևացնի, նվաստացնի նրանց: Հարց է առաջանում. արդյո՞ք փաստաբանը ունի նման իրավունք: Միանշանակ կարող ենք պատասխանել **ոչ**, չնայած, որ օրենքում դա արգելված չէ: Փաստաբանը չի կարող և չպետք է նվաստացնի որևէ մեկի մարդկային արժանապատվությունը: Փաստաբանը միշտ պարտավոր է հարգալից վերաբերվել իր գործընկերներին: Փաստաբանը իրավունք չունի դատական ամբիոնն օգտագործել ցանկացած անձի պատվի և արժանապատվության վիրավորանքների համար: Փաստաբանը պետք է հարգալից վերաբերվի դատարանին, թույլ չտալով դատավորի ներկայությամբ լեզվակռիվներ, փոխադարձ էմոցիոնալ հարձակումներ:

Փաստաբանի վարքագծի կանոնների մեջ պետք է առանձնացնել փաստաբանի ազնվությունը, կոմպետենտությունը և բարեխղճությունը:

*Ազնվություն.*

«Գործերի մեջ անբիծ ազնվությունը փաստաբանական գործունեության՝ որպես հասարակական ծառայության ղեկավարող սկզբունքն է»[12]: Հասարակական գիտակցության մեջ ազնվության սկզբունքն իր մեջ ներառում է նաև ճշմարտացիության սկզբունքը: Որոշ մարդիկ նույնիսկ համարում են դրանք հոմանիշ հասկացություններ: Սակայն ճշմարտացիության և ազնվության սկզբունքները զգալիորեն տարբերվում են: Ճշմարտացիության սկզբունքը ենթադրում է միայն ճշմարիտ, սուբյեկտիվորեն ճիշտ տեղեկատվության հաղորդում, այնինչ, ազնվության սկզբունքը զգալիորեն ավելի լայն է, այն ենթադրում է նաև սուբյեկտիվորեն ազնիվ վերաբերմունք անհատական գնահատականների, անձնական կարծիքի, սեփական իրավական դիրքի արտահայտման նկատմամբ:

*Կոմպետենտություն և Բարեխղճություն.*

Փաստաբանի կողմից իր մասնագիտական պարտականությունների կատարման ժամանակ դրսևորվող կոմպետենտությունը և բարեխղճությունը՝ նրա պրոֆեսիոնալիզմը և բարձր որակը ձևավորող անհրաժեշտ բաղկացուցիչներն են: Հարկ է ընդգծել, որ տվյալ կոնտեքստում «կոմպետենտության» տակ ենթադրվում է ոչ թե պարզապես փաստաբանի կողմից գործող օրենսդրության իմացությունը, այլև նրա մոտ այդ գիտելիքները գործնականում, կիրառելու համար անհրաժեշտ և բավարար հմտությունների առկայությունը, ինչպես նաև նրա ընդունակությունն այդ գիտելիքներն առավել արդյունավետ օգտագործել ի շահ վստահորդի:

Եթե զուգահեռներ անցկացնենք, օրինակ, ՌԴ-ում գործող մի շարք փաստաբանական միությունների համանման կանոնների հետ, ապա կտեսնենք, որ դրույթները մեծամասամբ համընկնում են ՀՀ-ում գործող փաստաբանի վարքագծի կանոնների հետ: ՌԴ-ի համանման շատ փաստաթղթերում շեշտը դրվում է վստահության վրա, քանի որ փաստաբանի գործունեության հիմքը փաստաբանի նկատմամբ վստահությունն է: Ոչ մի պարագայում փաստաբանը չպետք է թույլ տա անվստահության առաջացում: Վստահության չարաշահումը փաստաբանի կողմից արգելվում է[13]: Սրանք վստահության վերաբերող դրույթներ են, որոնք ոչ միշտ են պահպանվում մեր փաստաբանների կողմից: Դա կարող է դրսևորվել գիտելիքների թերի իմացության, մասնագիտական էթիկայի կանոններին չհետևելու, փաստաբանի «երկակի խաղի», սոցիալապես անապահով խավին ոչ պատշաճ իրավաբանական օգնություն ցույց տալու և այլ հանգամանքների տեսքով:

---

[12] Տե՛ս Д.П. Ватман. Адвокатская Этика. М., “Юрид. Лит.”. 1997г., էջ 38:

[13] Տե՛ս www.russian-lawyers.ru/pravila.shtml. Правила Професии. В.А. Валентинович.

***Էթիկայի կանոնները փաստաբան-գործընկեր փոխհարաբերությունների համակարգում.***

Փաստաբանների միջև հարաբերությունները պետք է կառուցվեն փոխադարձ հարգանքի և փաստաբանների մասնագիտական համերաշխության սկզբունքների հիման վրա: Փաստաբանը չպետք է՝

- թույլ տա այլ փաստաբանի նկատմամբ արժանապատվությունը և փաստաբանի համբավն արատավորող արտահայտություններ,
- վստահորդին դրդել այլ փաստաբանի հետ ունեցած իրավաբանական օգնություն ցույց տալու մասին պայմանագրից հրաժարվելուն,
- վստահորդի հետ քննարկի այլ փաստաբանի՝ անձնական կյանքին, նյութական վիճակին, մասնագիտական հմտություններին, հանձնարարության վարձատրության պայմաններին վերաբերող և հանձնարարության կատարման հետ չառնչվող այլ հանգամանքներ:

***Էթիկայի կանոնները փաստաբան-դատարան փոխհարաբերությունների համակարգում.***

Փաստաբանն իրավունք ունի վստահորդի, լրագրողի հետ խոսակցության ընթացքում արտահայտել իր կարծիքը դատարանի կայացրած որոշման կամ վճռի վերաբերյալ: Սակայն նրա անհամաձայնությունը դատարանի կայացրած որոշման կամ վճռի հետ կարող է հիմնավորվել միայն օրենքի նորմի ոչ ճիշտ կիրառման դեպքում: Բացի այդ, փատաբանը պետք է ուշադիր լինի հետևյալ հարցում. ինչպես փաստաբանը կարող է խորհուրդ տալ վստահորդին բողոքարկել դատարանի այս կամ այն որոշումը, միաժամանակ հույս չհայտնելով, որ բողոքը կբավարարվի:

***Էթիկայի կանոնները փաստաբանի և դատախազության, իրավապահպան մարմինների փոխհարաբերությունների համակարգում.***

Դատավարության ցանկացած փուլում վարելով գործը ներկայացուցչի կարգավիճակով՝ փաստաբանը պետք է նախևառաջ ներկայանա և ներկայացնի իր լիազորությունները: Պետական ծառայողը պետք է հստակ պատկերացում ունենա, թե ու՞մ հետ գործ ունի: Փաստաբանը պարտավոր է իրեն այնպես պահել, որպեսզի իր գործողությունները, դատավարության հետ կապված փաստաթղթերը (բացատրություններ, միջնորդություններ, հայտարարություններ և այլն), ինչպես նաև տրվող հարցերը չվնասեն իրավապահպան մարմինների հեղինակությանը, չվարկաբեկեն գործընկերներին և չնվաստացնեն դատավարության մասնակիցների արժանապատվությունը:

Չի կարելի հեգնել դատավարության կամ ստուգման մասնակիցներին, չի կարելի վստահորդի առջև ցույց տալ, որ նրանց գործողությունները շատ փոքր նշանակություն ունեն փաստաբանի համար, և որ այդ գործողությունները կատարող անձինք իրենց գործարար հատկանիշներով չեն համապատասխանում զբաղեցված պաշտոններին: Դա միանգամից բացասական հակազդեցություն է առաջացնում և բերում է փոխհարաբերությունների վատթարացմանը՝ ի վնաս վստահորդի:

Էթիկայի կանոնների ցանկացած խախտման դեպքում անհրաժեշտ է դիմել Փաստաբանական պալատի համապատասխան մարմին՝ կարգապահական հանձնաժողով:

***Փաստաբանի մասնակցությունը ընդհանուր իրավասության, վերաքննիչ և Վճռաբեկ դատարաններում.***

Փաստաբանի համար շատ պատասխանատու գործընթաց է պաշտպանության իրականացումը դատական նիստում: Դա պաշտպանյալի ճակատագրի որոշման գործում որոշիչ դեր է խաղում: Մեղավորությունը կամ պատասխանատվության չափը, եթե անձը մեղավոր է, ինչպես նաև անմեղությունը վերջնականապես որոշում է դատարանը: Դատական նիստերին պաշտպանի նախապատրաստումը ստեղծագործական գործընթաց է և կախված է հետևյալ հանգամանքներից՝

- արդյո՞ք փաստաբանն իրականացրել է պաշտպանությունը նախաքննության փուլում, թե՝ գործին անմիջականորեն ներգրավվել է դատարանում.
- վարել է արդյո՞ք փաստաբանն ինքնուրույն հետաքննություն և սեփական նախաձեռնությամբ բերել է որևէ ապացույցներ, թե՝ ոչ.
- գործի բարդության աստիճանից, փաստաբանի, նրա պաշտպանյալի և դատավարության այլ մասնակիցների անձնական հատկանիշներից:

Փաստաբանը դատաքննության նախապատրաստման փուլում՝ հաշվի առնելով նշված հանգամանքները, պետք է մանրամասնորեն ուսումնասիրի գործի նյութերը, ձևավորի տվյալ գործով պաշտպանական դիրքը, նախապատրաստի գրավոր միջնորդությունները, ուսումնասիրի և համադրի գործով նյութերի հետ իր նախաձեռնությամբ ձեռք բերված ապացույցները, հատկապես նրանք, որոնք ձեռք են բերվել նախաքննության ավարտից հետո, հնարավորության դեպքում նախապատրաստի մասնագետների այլընտրանքային եզրակացություններ, մշակի դատական նիստում պաշտպանության իրականացման ռազմավարությունը:

Դատական նիստի ընթացքում իր վստահորդին պաշտպանող փաստաբանը պետք է ակտիվ դիրք գրավի, մասնակցի գործով ձեռք

բերված ապացույցների հետազոտմանը, վկաների, տուժողի, փորձագետների հարցաքննությանը և այլն:

Հատուկ նշանակություն ունեն փաստաբանի կողմից ինքնուրույն ձեռք բերված ապացույցները: Փաստաբանն այստեղ առավելություն ունի մեղադրող կողմի նկատմամբ, քանի որ նա ծանոթ է մեղադրող կողմի բոլոր նյութերին, իսկ փաստաբանի տնօրինած տեղեկություններ մեղադրող կողմին հայտնի չեն: Դա կարող է էական ազդեցություն ունենալ դատական որոշման վրա:

Դատաքննությունն ավարտին հաջորդում է դատական վիճաբանությունը, որի ընթացքում փաստաբանը հանդես է գալիս ճառով: Պաշտպանի ճառից հետո Առջևում փաստաբանի ճառն է: Պաշտպանի ճառից հետոո, սակայն, ընդհանուր իրավասության դատարանում աշխատանքը չի ավարտվում: Անհրաժեշտ է ուսումնասիրել դատական նիստը նախագահողի արձանագրությունը, անհրաժեշտության դեպքում վերցնել նիստի ձայնագրության սկավառակը: Արձանագրությունը կազմում է դատական նիստի քարտուղարը, և հաճախ են լինում դեպքեր, երբ փաստաբանի, վկաների և դատավարության այլ մասնակիցների ելույթները ներկայացվում են խեղաթյուրված ձևով:

Եթե փաստաբանն արձանագրության վերաբերյալ ունի առարկություններ, ապա դրանք ձևակերպվում են դատական նիստի արձանագրության վերաբերյալ դիտողությունների տեսքով: Դատավորը կայացնում է առարկությունների ճշմարտության հաստատման կամ դրանց մերժման վերաբերյալ պատճառաբանված որոշում:

Դատական ակտի հրապարակումից հետո պաշտպանը պետք է հանդիպի պաշտպանյալի հետ և քննարկի այդ դատավճռի կապակցությամբ վերաքննիչ բողոք ներկայացնելու մասին հարցը, քանի որ պաշտպանն ինքնուրույն նման որոշում կայացնելու իրավունք չունի: Եթե պաշտպանը չի ցանկանում բողոքարկել ստորադաս դատարանի կայացրած դատական ակտը, ապա պաշտպանի կարգավիճակում փաստաբանի աշխատանքն ավարտված է: Եթե պաշտպանյալը ցանկություն է հայտնել վերաքննության կարգով բողոքարկել կայացրած ակտը, ապա սկսվում է փաստաբանի աշխատանքի հաջորդ փուլերը՝ աշխատանքը վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում:

Քրեական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում պաշտպանի պարտադիր մասնակցությունը վերաքննիչ ատյանում: Վերաքննիչ ատյանում փաստաբանի մասնակցության միակ հիմքը ամբաստանյալի, ինչպես նաև նրա հանձնարարությամբ իր օրինական ներկայացուցիչների խնդրանքն է փաստաբանին: Այդպիսի հանձնարարությունը ձևակերպվում է վստահորդի և փաստաբանի միջև համաձայնության կնքման միջոցով:

Վերաքննիչ ատյանի դատարանում իրավաբանական օգնություն ամբաստանյալին իրավունք ունի ցույց տալ ինչպես դատական վիճաբանությանը մասնակցած փաստաբանը, այնպես էլ ցանկացած այլ պաշտպան, որին կհանձնարարվի ամբաստանյալի պաշտպանությունը:

Փաստաբանի աշխատանքը վերաքննիչ ատյանում կարելի է բաժանել 2 փուլի՝

- գործը վերաքննության կարգով քննարկման նախապատրաստելը,
- փաստաբանի անմիջական մասնակցությունը վերաքննիչ դատարանի դատական նիստում:

Փաստաբանի նախապատրաստումը վերաքննիչ դատարանի նիստում մասնակցելու համար ներառում է՝

- քրեական գործի նյութերի ուսումնասիրում,
- զրույց ամբաստանյալի հետ,
- վերաքննիչ բողոքի պատրաստումը և ներկայացումը դատարան,
- դատախազի ներկայացմամբ այլ վերաքննիչ բողոքներին ծանոթանալը և դրանց վերաբերյալ առարկությունների ներկայացումը,
- լրացուցիչ նյութերի ձեռք բերումը,
- լրացուցիչ բողոքի նախապատրաստումը անհրաժեշտության դեպքում,
- վերաքննիչ ատյանի դատարանում ելույթի նախապատրաստումը:

Վերաքննիչ դատարանի դատական նիստում փաստաբանի հիմնական խնդիրն է ապացուցել դատավճռի անօրինականությունը, չհիմնավորվածությունը և անարդար լինելը, բացահայտել գործով թույլ տրված դատավարական օրենսդրության խախտումները և ցույց տալ, թե ինչպես են դրանք խանգարել դատարանին բազմակողմանիորեն քննել գործը և ազդել կամ կարող էին ազդել օրինական և հիմնավորված դատավճռի կայացմանը: Նկատենք, որ պաշտպանի բանավոր ելույթը վերաքննիչ դատարանում ո՛չ իր ձևով, ո՛չ իր բովանդակությամբ չի կարող լինել այնպիսին, ինչպիսին որ ընդհանուր իրավասության դատարանում էր: Դրա ձևն ու բովանդակությունը զգալիորեն որոշվում են նրանով, թե արդյո՞ք փաստաբանը հիմնավորում է իր կողմից ներկայացված բողոքը, թե՝ առարկում է դատախազի կամ տուժողի բողոքի դեմ:

Առաջին դեպքում պաշտպանի հիմնական ուշադրությունը կենտրոնանում է դատավճռի կամ դրա առանձին մասի ոչ արդար լինելու

մասին վկայող գործով եղած ապացույցների և լրացուցիչ ներկայացված նյութերի համոզիչ հիմնավորման վրա:

Երկրորդ դեպքում պաշտպանը հիմնավորում է դատախազի կամ տուժողի բողոքի պահանջների և եզրակացությունների անկատարությունը, ներկայացնում է իր փաստարկները և եզրակացությունները՝ ի ապացույց դատավճռի օրինականության և հիմնավորվածության, առաջարկում է թողնել բողոքը առանց բավարարման, իսկ դատավճիռն՝ առանց փոփոխման:

Փաստաբանն իրավունք ունի վճռաբեկ բողոք բերել միայն ամբաստանյալի, արդարացվածի, նրանց օրինական ներկայացուցիչների, ինչպես նաև այլ անձանց խնդրանքով, ինչի մասին փաստաբանի հետ կնքվում է պայմանագիր:

Վճռաբեկության կարգով վերանայվում են ընդհանուր իրավասության և վերաքննիչ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիռները և որոշումները:

Բողոք բերող փաստաբանը ծանուցվում է գործի քննության տեղի և ժամանակի մասին: Գործի քննությունը սկսվում է վճռաբեկ դատարանի պալատի դատավորի զեկուցումով: Զեկուցողը շարադրում է գործի հանգամանքները, դատավճռի կամ որոշման բովանդակությունը և վճռաբեկ բողոքի փաստարկները: Վճռաբեկ դատարանի պալատի դատավորներն իրավունք ունեն հարցեր տալ զեկուցողին:

Բողոք բերած փաստաբանն իրավունք ունի ներկա գտնվել վճռաբեկ դատարանի նիստին:

## Փաստաբանության զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում

Փաստաբանությունը, ինչպես ցանկացած սոցիալ-իրավական ինստիտուտ, ենթարկվելով դիալեկտիկայի օրենքներին, գտնվում է փոփոխման, զարգացման գործընթացում: Սահմանադրական և օրենսդրական բարեփոխումները, միջազգային պայմանագրերի կնքումը և միջազգային կազմակերպություններին անդամագրվելը կարող են զգալի փոփոխություններ առաջացել փաստաբանության ինստիտուտի կառուցվածքում:

Հին աշխարհում մեկ մարդը կարող էր տիրապետել ժամանակի բոլոր գիտական գիտելիքներին: Այսօր անգամ մեկ մասնագիտությունն այնքան նրբություններ է պարունակում, որ կարիք է առաջանում նեղ մասնագիտացվածության: ՀՀ-ում փաստաբանները հիմնականում գործում են՝ ունենալով մի քանի մասնագիտացվածություն:

2004թ. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում նշված են սկզբունքներ (անկախության, օրինապահության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության սկզբունքները), որոնք ընդհանուր են ինչպես զարգացած ժողովրդավարություն ունեցող, այնպես էլ երիտասարդ ժողովրդավարությամբ պետությունների համար:

Այդ սկզբունքները այդքան էչ չեն համապատասխանում մերօրյա հայ իրականությանը: Նշված խնդրի պատճառը հիմնականում պայմանավորված է ոչ այնքան օրենսդրական բացերով ու պետական քաղաքականությամբ, որքան հասարակության իրավագիտակցությամբ: Բացը լրացնելու համար հարկավոր է ունենալ քաղաքացիական հասարակություն, որի կայացմանը նպաստող ինստիտուտներից է ՀՀ փաստաբանների պալատը: Ստացվում է փակ օղակ, որի ելքը փաստաբանների պալատի կողմից իր գործունեության ընդլայնումն է, հատուկ դասընթացների կազմակերպումը ոչ միայն պալատի անդամների, այլև քաղաքացիների համար:

Վիճակագրությունը ցույց է տալիս, որ բարձր իրավագիտակցություն ունեցող հասարակության քաղաքացիները, հասկանալով փաստաբանական ծառայության կարևորությունը, ավելի հաճախ են օգտվում վերջինիցս, քան ՀՀ-ում և այլ երիտասարդ ժողովրդավարություն ունեցող երկրներում:

Փաստաբանության զարգացման գործում կարևոր նշանակություն ունի նաև Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի համագործակցությունը տարբեր երկրների նմանատիպ կառույցների հետ: «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով նախատեսվում է նման հնարավորություններ: Ընդհանրապես յուրաքանչյուր ինստիտուտում համագործակցությունը, գաղափարների փոխանակումը, համատեղ ուժերով ծրագրերի մշակումը նպաստում է ինստիտուտի զարգացմանը: Փաստաբանության համար առանձնապես կարևորվում է համագործակցությունը և այն կարելի է դիտարկել 2 ասպեկտով՝

- Հայաստանի Հանրապետության փաստաբանների համագործակցություն և առողջ մրցակցություն.
- համագործակցություն միջազգային ասպարեզում, քանի որ չնայած գլոբալիզացիայի վտանգին, մարդու իրավունքների պաշտպանության գործում համանման օրենսդրության կիրառությունը լավագույն հիմքն է մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ինստիտուտների զարգացման համար:

Փաստաբանության զարգացման համար շատ մեծ կարևորություն ունի՝

- պատմական փորձի օգտագործումը,

- կայուն սկզբունքների կողքին ճկուն մեխանիզմների կիրառումը,
- օրենսդրական բարեփոխումների արդյունքում փաստաբանի դերի մեծացումը,
- քաղաքացիական հասարակության կայացմանն ուղղված քայլերի ձեռնարկումը:

# Եզրափակիչ մաս

Փաստաբանությունը՝ որպես քաղաքացիական հասարակության կարևորագույն ինստիտուտ, գտնվում է զարգացման և փոփոխման գործընթացում: Մարդկության զարգացման պատմության ընթացքում բավական երկար ժամանակ այս կամ այն բնագավառում ձեռքբերումները համարվում էին լավագույնը և թյուր կարծիք էր ստեղծվում, որ ավելիին հասնելն անհնար է: Գիտությունը փշրեց նման մոտեցումը: Կարևորվեցին մարդկանց իրավունքները, ազատությունները: Մեր օրերում յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների պաշտպանության հնարավորություն: Գոյություն ունեն մարդու իրավունքների պաշտպանության բազմաթիվ ինստիտուտներ, որոնք, սակայն անընդհատ վերակառուցվում և բարեփոխվում են:

Մենք չպետք է դժգոհ լինենք, քանի որ մեր Հանրապետությունը դեռ շատ երիտասարդ է և նա՝ ինքն է դեռ գտնվում զարգացման մեջ: Եթե ցանկանում ենք ունենալ կայացած և ճկուն իրավական համակարգ, պետք է նախ ձգտել ունենալ կայուն և ամենակարևորը՝ քաղաքացիական հասարակություն, որի յուրաքանչյուր անդամ կգիտակցի, թե ինչքան մեծ նշանակություն ունի փաստաբանությունը: Վերջին հաշվով նա պաշտպանում է թե՛ մեղավորին, և թե՛ անմեղին:

Դժվար է ասել, թե արդյո՞ք փաստաբանությունը կհասնի իր զարգացման գագաթնակետին, սակայն յուրաքանչյուր ժամանակաշրջանում կարելի է մշակել տվյալ ժամանակի համար հնարավորինս կիրառելի օրենսդրություն: Այն կարևոր գաղափարները, որոնք առաջանում են, չպետք է մնան թղթի վրա, այլ պետք է կյանքի կոչվեն: Ուստի փաստաբանների պալատը՝ այս ինստիտուտի վերաբերյալ օրենսդրական իդեալները, պետք վերածի իրականության:

## Օգտագործված գրականության ցանկ

*Նորմատիվ իրավական ակտեր*


1. ՀՀ Սահմանադրություն, ընդունված 05.07.1995թ. (27.11.2005թ. փոփոխություններով):
2. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենք, ընդունված 14.12.2004թ.:
3. ՀՀ Քրեական դատավարության օրենսգիրք, ընդունված 01.07.1998թ.:
4. Փաստաբանի վարքագծի կանոնագիրք, ընդունված 18.02.2006թ.:
5. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, ընդունված ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից, 10.12.1948թ.:


*Մասնագիտական գրականություն*


1. Ե. Ռ. Ազարյան: Փաստաբանության հիմունքները, Երևան, 2006թ.
2. Ս. Դիլբանյան: ՀՀ Դատարանակազմությունը և իրավապահպան մարմինները, Երևան, 2009թ.
3. Ն. Այվազյան: ՀՀ Սահմանադրական իրավունք, Երևան, 2008թ.
4. Ն. Ա. Ապյան, Գ. Հ. Սաֆարյան, Ջ. Հ. Հակոբյան: Պետության և իրավունքի տեսության հիմնահարցեր, Երևան, 2001թ.
5. Д.П. Ватман. Адвокатская Этика. Москва, 1997г.:


*Ինտերնետային կայքեր*


1. www.pastaban.am
2. www.concourt.am
3. www.russian-lawyers.ru/pravila.shtml. Правила Професии. В.А. Валентинович.
4. www.ayla.am

*ՄԻՐՈՒՇ ՄՈՒՐԱԴՅԱՆ*

# Ներածություն

Փաստաբանությունը միշտ եղել և մնում է քաղաքացիական հասարակության ինստիտուտ, որի հիմնական կոչումը պետության ու հասարակության շահերի հավասարակշռումն է, աջակցությունը արդարադատության իրականացմանը, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ մարդ-անհատն ու նրա արժանապատվությունը հռչակված են որպես բարձրագույն արժեք, իսկ մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները՝ որպես նրա արժանապատվության անքակտելի հիմք ու բովանդակություն, և կարող են պաշտպանվածության երաշխիք ունենալ միայն երկրում պատշաճ մակարդակի փաստաբանական ծառայության առկայության պայմաններում:

Մեր հանրապետությունում փաստաբանության զարգացումը դժվարին ու երկար ճանապարհ է անցել: Ութսունչորս տարվա պատմություն ունեցող Հայաստանի փաստաբանությունը շարունակում է հաստատվել իր դերում՝ որպես ինքնուրույն, անկախ, բայց և այնպես, հասարակությունից չանջատված ու նրա շահերին ծառայող ինստիտուտ: Հասարակության ու պետության զարգացմանը զուգընթաց իրավական դաշտի կատարելագործման աշխատանքները շարունակական բնույթ են կրում:

Իմ կարծիքով կարելի է համարձակորեն փաստել, որ փաստաբանությունն այսօր մեզանում չափազանց արդիական մասնագիտություն է: Այն գնալով առավել կարևորվում է, քանի որ մարդիկ այժմ «պաշտպանությունը» որպես իրավունք իրականացնում են և փաստաբանի խորհրդատվությանն ու օգնությանը դիմում են առանց ավելորդ կաշկանդվածության: Համեմատած ավելի վաղ շրջանի հետ, հիմա մարդիկ իրենց իրավունքներն ավելի լավ գիտեն և ավելի հստակ պատկերացում ունեն իրավունքի և դրա պաշտպանության մասին: Բնականաբար, տարիներն անցնում են, փոխվում է դարը, փոխվում են մարդիկ, փոխվում է կենսակերպը և ամեն ինչ գնալով զարգանում է: Ուստի փաստաբանությունը ևս բացառություն չէ և անընդհատ անցնում է այդ զարգացման ճանապարհը: Միանշանակ ասել, որ Հայաստանում փաստաբանությունը անշեղորեն է գործում՝ սխալ կլինի: Քանի որ մեր երկրում ժողովրդավարական իրավական պետության կայացման համար անհրաժեշտ է անցման տևական ժամանակշրջան: Դա առաջին հերթին բացատրվում է նրանով, որ մեզանում դեռևս լիովին ստեղծված չեն այնպիսի սոցիալ-տնտեսական ու քաղաքական պայմաններ, կա-

յուն իրավական ավանդույթներ, բարձր իրավական մշակույթ և բարոյական մթնոլորտ, որոնք թույլ կտային հնարավորինս արագ ստեղծել իրավական պետության հիմքերը, կենսագործել դրա սկզբունքները: Հայաստանի Հանրապետությունում գործող որոշ օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր հակասական են, իսկ իրականացման մեխանիզմներն՝ անկատար, որոնց հետևանքով դրանք երբեմն ամբողջությամբ չեն կենսագործվում:

## Նկարագրական Մաս

«Փաստաբանությունը փաստաբանների մասնագիտական միավորում է, որը հանդիսանալով քաղաքացիական հասարակության ինստիտուտ, չի մտնում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգի մեջ»: Նմանատիպ ձևակերպումը տրված է ՀՀ «Փաստաբանության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասում, որը հստակ սահմանում է փաստաբանության հարաբերությունը պետության նկատմամբ և նրա տեղը հասարակության մեջ:

Փաստաբանությունը՝ որպես այլ սոցիալական հաստատություն, չէր կարող միանգամից առաջանալ, առավել ևս՝ լիովին կազմակերպած տեսքով, ինչը պայմանավորված էր պետականության թույլ կառուցվածքով և թերզարգացած իրավական համակարգով: Բնականաբար նման պայմաններում ժողովրդի մոտ առկա էին իրավապաշտպանության միայն սաղմերը: Սակայն ժամանակն առաջ է ընթանում, իսկ էվոլուցիայի արդյունքում փոփոխությունները որքան անխուսափելի են, նույնքան էլ անհրաժեշտ են ու կարևոր: Զարգանում է պետությունը, հասարակությունը, գիտությունը, փոխվում են մարդկանց աշխարհայացքները, մտածելակերպը, բարձրանում է իրավագիտակցության մակարդակը, առավել հստակեցվում են օրենքները, արժևորվում են մարդկանց իրավունքները, հետևապես զարգանում է այդ իրավունքների պաշտպանության ինստիտուտը: Կարելի ասել՝ փաստաբանությունը ծնունդ է առել ժողովրդի մեջ, նրա կյանքում, հասարակությունում, իսկ ձևավորվել է պետության կողմից ճանաչում ստանալուց հետո:

Տարբեր երկրներում այդ ինստիտուտի առաջացումը տեղի է ունեցել յուրովի: Օրինակ՝ Հունաստանում փաստաբանությունը ավելի շատ կապված էր հռետորական արվեստի, քան իրավագիտության հետ: Դատարանում անձը ելույթ էր ունենում անձամբ, կամ բարեկամի միջոցով, իսկ իրավական ներկայացուցչությունը Հունաստանում չհասցրեց ձևավորվել:

Հին Հռոմում փաստաբանության պատմության մեջ կար երկու ուղի. Հանրապետության ժամանակներում փաստաբանությունը լիովին

ազատ մասնագիտություն էր, գործում էր անկախ, բացարձակապես անհատույց, իսկ կայսրության ժամանակներում այն վերածվեց պետական ծառայության՝ իրեն բնորոշ աշխատանքի մանրակրկիտ կանոնակարգմամբ, անկախության և ինքնիշխանության բացակայությամբ: Փաստաբանության կազմակերպման այդ ուղղությունների գոյությունը Հռոմում հետագայում անդրադարձավ տարբեր պետություններում փաստաբանության ինստիտուտի զարգացման վրա:

Միջին դարերի Եվրոպայում մինչև Նորագույն ժամանակների սկզբում ձևավորվել էին փաստաբանության կազմակերպման երկու հիմնական տեսակ՝ անգլո-ֆրանսիական և գերմանական: Անգլո-ֆրանսիական համակարգում փաստաբան դառնալու համար կար որոշակի կրթական ցենզ: Փաստաբանությունն ու դատական իշխանությունը գտնվում էին միևնույն սոցիալական մակարդակի վրա: Փաստաբանի աշխատանքի վարձատրությունը համարվում էր վստահորդի նվիրատվությունը՝ գործով մասնակցության համար, իսկ հոնորարը վճարվում էր գործի ավարտից հետո: Գերմանական համակարգում փաստաբանները որևէ կերպ կապված չէին դատական իշխանության հետ, և շատ ավելի ցածր էին դասվում: Այս համակարգում փաստաբանը ոչ միայն իրավաբան էր ու հռետոր, այլ նաև գործնական աշխատող, նա գործում էր դատարանի դահլիճում, նոտարում, ոստիկանությունում, պետական ատյաններում և այլն: Մի խոսքով, փաստաբանը զբաղվում էր ամեն ինչով և իր ծառայությունների վաստակը որոշվում էր կողմերի համաձայնությամբ ու վճարվում՝ նախօրոք: Այս ուղին եվրոպական փաստաբանության պատմության զարգացման հիմքն էր:

Ժամանակակից փաստաբանությունը կարող է առավել ճշգրիտ ըմբռնվել դրա ստեղծման, զարգացման, փոփոխման ուսումնասիրության ճանապարհով, քանի որ միայն ներկայիս կյանքի վերլուծության հիման վրա փաստաբանության հիմնախնդիրների վերաբերյալ լուրջ եզրակացություններ կատարելը բավարար և հիմնավոր չէ, իսկ անցյալի վերլուծությունը բացահայտում է դրա ներկայի շատ կարևոր հատկանիշները: Փաստաբանությունը կոչված է հասարակության, պետության և անձանց (իրավաբանական և ֆիզիկական) շահերի հավասարակշռմանը և օրինականության պահպանմանը: Այն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն ուղղված է իրավաբանական օգնություն ստացողի հետապնդած օրինական շահերի իրականացմանը օրենքով չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով: Համաձայն «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17 հոդվածի՝ փաստաբան է համարվում այն անձը, որը սույն օրենքով սահմանված կարգով ստացել է փաստաբանական գործունեություն իրականացնելու արտոնագիր, Փաստաբանների Պալատի անդամ է և տվել է երդում: Փաստաբանը համարվում է իրավական հարցերով անկախ խորհրդատու:

Նույն օրենքի 21-րդ հոդվածը ամրագրում է փաստաբանների գործունեության երաշխիքները, մասնավորապես, փաստաբանն իր գործունեությունն իրականացնելիս անկախ է և ղեկավարվում է միայն ՀՀ Սահմանադրությամբ ու օրենքներով, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով, փաստաբանի վարքագծի կանոնագրքով և փաստաբանների պալատի կանոնադրությամբ: Այս անկախությունը սակայն չպետք է հասկանալ բացարձակ իմաստով. ճիշտ է փաստաբանների նկատմամբ պետությունը հսկողություն չի իրականացնում, սակայն հետևում է, որ նրանք գործեն օրենքի շրջանակներում: Փաստաբանը պետք է ապահովվի իր վստահորդի հետ առանձին, անարգել, մեկուսի հաղորդակցվելու, խորհրդատվություն տրամադրելու հնարավորությամբ: Եվ վերջապես, փաստաբանը չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել իր մասնագիտական պարտականություններն օրենքի պահանջներին համապատասխան իրականացնելու համար:

Վերը նշվածից կարելի է եզրակացնել, որ փաստաբանական գործունեության հիմքում ընկած են օրինականության, անկախության, կամավորության, ինքնակառավարման, հրապարակայնության, բանավորության և մրցակցության սկզբունքները: Որպես ժողովրդավարական ինստիտուտ՝ այն կարող է գործել միայն այլ սկզբունքների առկայության պայմաններում: ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված է, որ «Յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք»: Ակնհայտ է, որ այս դրույթի իրականացումը կարող է ապահովվել փաստաբանների միության միջոցով, քանզի փաստաբանները որպես իրավաբաններ կարող են ցույց տալ որակյալ իրավաբանական օգնություն: Փաստաբանների միությունները այնպիսի հասարակական կազմակերպություններ են, որոնց անմիջական խնդիրն անձին իրավաբանական օգնություն ցույց տալն է: Նման կազմակերպությունների կազմավորման գլխավոր պատճառն այն է, որ հասարակության անդամների ճնշող մեծամասնությունը չունի բավարար գիտելիքներ իր իրավունքների և պարտականությունների, ինչպես նաև օրենքների կիրառման մասին: Մարդկանց հսկայական մի զանգված պարզապես անտեղյակ է օրենքներից, անտարբեր է անգամ իր իրավունքների ու պարտականությունների նկատմամբ: Շատ դեպքերում մարդիկ վերացական վերաբերմունք են դրսևորում և նույնիսկ անիմաստ են համարում ծանոթանալ իրենց իրավունքներին: Այս պատճառով էլ նրանք չեն կարող անձամբ պաշտպանել իրենց շահերը, ուստի զգում են այնպիսի մեկի կարիքը, ով տիրապետում է նյութական և դատավարական իրավունքի նորմերին: Իսկ նման իրավապաշտպան ֆունկցիայի իրականացումը բնականաբար վերապահված է փաստաբաններին: Ճիշտ է փաստաբանների միությունը հասարակական կազմակերպություն է, բայց պետության համար փաստաբանական գործունեության դերը

այնքան մեծ է, որ այն ճանաչվում է իրավապահական գործունեության ինքնուրույն տեսակ:

Եղել են ժամանակներ, երբ փորձ է արվել փաստաբանությունը մտցնել պետական մարմինների համակարգի մեջ, իսկ փաստաբաններին դարձնել պետական ծառայողներ, սակայն այս տարբերակը երբևիցե իրեն չի արդարացրել, քանի որ փաստաբանները դառնալով պաշտոնական անձինք կորցնում են իրենց անկախությունը և ինքնուրույնությունը: Կյանքի փորձը ցույց է տվել, որ փաստաբաններն իրենց առջև դրված խնդիրները կարող են իրականացնել միայն մեկ հասարակական կազմակերպության մեջ միավորված լինելու դեպքում: Կարելի է ասել փաստաբանների միավորումը այն հիմնական ձևն է, որն ապահովում է բազմակողմանի իրավական օգնություն: Առհասարակ, փաստաբանությունը չի ստեղծվել քաղաքական նպատակներից դրդված, որպես պետական երկարաժամկետ կամ կարճաժամկետ ծրագրի արդյունք: Այն անհրաժեշտ է հասարակությանը և ստեղծվել է հենց հասարակության պահանջմունքներից ելնելով ու նրա պահանջով: Իսկ այդ պահանջմունքները ծնվել են ոչ թե հասարակության որոշակի խավերում կամ գործունեության որոշ ոլորտներում, և ոչ թե կարճաժամկետ հեռանկարով, այլ այն պայմանավորված է հասարակության բոլոր անդամների պաշտպանության մշտական պահանջմունքով՝ անկախ գործունեության ոլորտից:

2005թ. հուլիսի 9-ին փաստաբանները նշեցին Հայաստանում փաստաբանության ինստիտուտի ձևավորման 83-ամյակը: Փաստաբանության գործունեության իրականացումը որքան էլ համապատասխանի օրենքի դրույթներին կարող է հակահասարակական վիճակներ ստեղծել, եթե չեն պահպանվում փաստաբանական էթիկայի կանոնները, ինչն էլ նշված է 2006թ. ընդունված ՀՀ փաստաբանների կանոնադրությամբ և փաստաբանի վարքագծի կանոնագրքում: «Էթիկայի նորմերը կոչված են օգնելու փաստաբանական գործունեության իրականացմանը, սահմանելով ոչ այնքան այն, թե ի՞նչ պետք է կատարվի, այլ այն, թե ինչպե՞ս դա կատարել ավելի որակյալ և հաջողված, քանի որ էթիկայի նորմերը խախտող վարքը արտացոլվում է, ինչպես փաստաբանի, այնպես էլ ողջ փաստաբանության հեղինակության վրա»: Մեր համաքաղաքացիների օրենքների հետ առնչության մեծ մասը կատարվում է փաստաբանների միջոցով, ուստի վերջիններիս անարժան կամ ոչ բարեխիղճ վերաբերմունքը դառնում է քննարկման առարկա հաճախորդի և նրա ընկերների, բարեկամների, գործընկերների միջև, ինչը հանգեցնում է վստահության կորստի և պաշտպանությանը դիմողների քանակության նվազման: Ստացվում է, որ մասնագիտության հեղինակությունը սկսվում է անկում ապրել: Այսպիսով, փաստաբանների

նկատմամբ անհրաժեշտ է ներկայացնել մասնագիտական էթիկայի և վարքի չափորոշիչների պահպանման ամենախիստ պահանջները:

Հատկապես մեծ է իրավաբանական օգնության ցուցադրման նշանակությունը անձի ձերբակալման կամ կալանավորման դեպքում: Փաստաբանը կասկածյալի կամ մեղադրյալի համաձայնությամբ նրա պաշտպանությունը ստանձնելու պահից ձեռք է բերում պաշտպանի կարգավիճակ և այդ մասին անմիջապես տեղյակ է պահում վարույթն իրականացնող մարմնին: Կասկածյալի և մեղադրյալի պաշտպան ունենալու իրավունքը՝ նրանց վերապահված իրավունքներից հիմնականն է: Տեսական գրականության մեջ իրավացիորեն նշվում է, որ պաշտպան ունենալու իրավունքը հանդես է գալիս որպես մեղադրյալի մնացած բոլոր իրավունքների իրականացման երաշխիք: Պաշտպանի՝ քրեական դատավարությանը մասնակցելու հիմնական նպատակը կասկածյալի և մեղադրյալի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն է: Այս առումով անհրաժեշտություն է առաջանում ավելի հանգամանալից ներկայացնել կասկածյալի, մեղադրյալի օրինական շահերի էությունը:

Մտածողների տեսակետները օրինական շահի վերաբերյալ տարբեր են: Այսպես, Վ.Դ. Գոլդինները պնդում է հետևյալը, որ «եթե փաստաբանին հայտնի է դառնում, որ իր մեղքը ժխտող ամբաստանյալը կատարել է իրեն մեղսագրվող արարքը, ապա նա չի կարող նրան պաշտպանել ոչ միայն այն պատճառով, որ պաշտպանյալի շահը անօրինական է, այլ նաև այն պատճառով, որ այդ դեպքում պաշտպանության միջոցներն ու եղանակները պաշտպանի համար ակնհայտ անօրինական են»: Իսկ Մ. Ս. Ստրոգովիչի տեսակետը այլ էր, ըստ նրա «մեղադրյալի օրինական շահը կայանում է նրանում, որ գործի նախաքննության և դատաքննության ընթացքում լրիվ, բազմակողմանի և անկողմնակալ հավաքվեն և ուսումնասիրվեն բոլոր ապացույցները, որոնք խոսում են հօգուտ մեղադրյալի, արդարացնում կամ մեղմացնում են պատասխանատվությունը, և որ մեղադրյալը հնարավորություն ունենա վիճարկել մեղադրանքը»: Այս տեսակետը որոշ չափով ընդունելի է, քանի որ պաշտպանությունը օրինական միջոցներով իրականացնելու մեղադրյալի շահը միշտ օրինական է, անկախ նրանից նա հանցագործություն կատարել է թե՝ ոչ, իրեն մեղավոր ճանաչել է թե՝ ոչ և այլն: Այդ շահը պաշտպանը միշտ պարտավոր է պաշտպանել անկախ մեղադրանքի ապացուցվածության վերաբերյալ իր սեփական կարծիքի առկայությունից, այսինքն՝ նա պետք է բացահայտի մեղադրյալին արդարացնող հանգամանքները:

Պաշտպանությունը գիտակցված և նպատակաուղղված դատավարական գործունեություն է, որն իրականացնում է պաշտպանության կողմը՝ նպատակ ունենալով հերքել մեղադրանքը, դրանով նաև նպաս-

տել ապօրինաբար քրեական հետապնդման ենթարկված անձանց իրավունքների վերակագնմանը կամ մեղմացնել պատասխանատվությունը: Պաշտպանության վերաբերյալ կարծիքներն ու տեսակետները բազմաթիվ են, ուստի ևս հակասությունները չեն բացառվում: Անմեղության կանխավարկածի համաձայն՝ մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Սա խոսում է այն մասին, որ ելնելով դատավարական շահերից՝ կասկածյալը կամ մեղադրյալը իրավունք ունի վարույթն իրականացնող մարմնին ներկայացնել իրեն արդարացնող կամ պատասխանատվությունը մեղմացնող նյութեր: Սակայն սրանով «պաշտպանության կողմը դառնում է ոչ թե ապացուցման պարտականության, այլ ապացուցման իրավունքի սուբյեկտ»: Եթե պաշտպանը չի կարողացել ապացուցել մեղադրանքի անհիմն լինելը, ապա դրանից բնավ չի հետևում մեղադրյալին մեղավոր ճանաչելու հնարավորությունը: Եթե մեղադրողը պատշաճ չկատարի մեղադրանքն ապացուցելու պարտականությունը, ապա ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածի համաձայն «չփարատված կասկածները կմեկնաբանվեն հօգուտ մեղադրյալի»:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածն ամրագրում է փաստաբանի պարտականությունները: Դրանք են՝

- ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը ՀՀ օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով,
- պահպանել «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի, Փաստաբանի վարքագծի կանոնագրքի և Փաստաբանների Պալատի կանոնադրության պահանջները,
- չհրապարակել փաստաբանական գաղտնիքը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի,
- մշտապես կատարելագործել իր գիտելիքները,
- մուծել անդամավճարներ,
- չկատարել վստահորդի շահերին հակասող որևէ գործողություն, չընդունել դիրքորոշում՝ առանց նրա հետ համաձայնեցնելու, բացառությամբ այն դեպքերի, երբ փաստաբանը համոզված է պաշտպանյալի ինքնազրպարտության մեջ, հակառակ պաշտպանյալի դիրքորոշման՝ չընդունել դեպքի հետ նրա առնչությունը և մեղավորությունը:

Հաճախ պաշտպանը վարույթում մասնակցող, պետության շահերը ներկայացնող, պետության անունից հանդես եկող, մեղադրող և դատապարտող անձանց կողմից դիտարկվում է որպես հանցագործին օպերատիվ, արագ և խիստ պատժի ենթարկելուն խանգարող անձ: Անգամ կարող է թյուր կարծիք ստեղծվել իբր փաստաբանը կողմ է հանցագործություններին և այլ իրավախախտումներին: Այս առումով հարկ

է նշել, որ փաստաբանը պաշտպանում է ոչ թե հանցագործությունը, այլ՝ մարդուն: Ինչպես հայտնի է հանցագործությունը հենց այնպես չի կատարվում: Գոյություն ունեն հանգամանքներ, պատճառներ, նպատակներ, հոգեկան ապրումներ, հուզական վիճակ, որոնք էլ մանրամասնորեն ուսումնասիրելով՝ փաստաբանը օրենքի պահանջներին համապատասխան և իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում ոչ թե արդարացնում է հանցավոր արարքը, այլ փորձում է ինչոր կերպ օգնել այդ արարքը կատարող անձին:

Փաստաբանը քրեական գործով վարույթին որպես պաշտպան մասնակցում է հրավերով կամ նշանակմամբ: Կասկածյալը կամ մեղադրյալն իրավունք ունի իր նախաձեռնությամբ և ընտրությամբ հրավիրել պաշտպան, այսինքն՝ նախընտրել այս կամ այն փաստաբանին: Քրեական վարույթն իրականացնող մարմինն էլ պարտավոր է ճանաչել կասկածյալի կամ մեղադրյալի նախընտրած պաշտպանի կարգավիճակը: Իսկ պաշտպան ընտրելու իրավունքի սահմանափակումը համարվում է քրեադատավարական օրենքի կոպիտ խախտում: Պաշտպանը քրեական գործով վարույթին կարող է մասնակցել նաև կասկածյալի կամ մեղադրյալի օրինական ներկայացուցչի կամ ազգականի հրավերով ևս, բայց նման դեպքերում նույնպես կասկածյալի, մեղադրյալի համաձայնության առկայությունը պարտադիր է:

Վարույթն իրականացնող մարմինը ՀՀ Փաստաբանների Պալատի միջոցով ընտրում է պաշտպան այն դեպքում, երբ՝

1. այդ մասին միջնորդում է կասկածյալը կամ մեղադրյալը,
2. քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է:

Ուստի վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է ապահովել կասկածյալի, մեղադրյալի իրավունքը, առաջարկելով՝ պաշտպան հրավիրել: Այս դեպքում պաշտպան հրավիրելու առաջարկը վարույթն իրականացնող մարմնի ոչ թե իրավունքն է, այլ պարտականությունը:

Պաշտպանի պարտադիր մասնակցության ինստիտուտը միտված է կասկածյալի, մեղադրյալի պաշտպանության իրավունքի և դրա ապահովման հիմնադրույթի իրականացմանը, ավելին՝ այն բխում է արդարադատության շահերից, և ընդհանրապես քրեական դատավարության խնդիրներից: Եթե պաշտպանի մասնակցությունը պարտադիր է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 2-9-րդ կետերով նախատեսված դեպքերում, ապա վարույթն իրականացնող մարմինը դա ապահովում է անկախ կասկածյալի կամ մեղադրյալի միջնորդությունից: Պաշտպանից կարող է հրաժարվել և այդ մասին հայտարարել միայն կասկածյալը կամ մեղադրյալն անձամբ՝ իր նախաձեռնությամբ: Այդ հայտարարությունը պետք է լինի նրա

ազատ կամահայտնությամբ, այլ ոչ թե հարկադրված: Հակառակ դեպքում վարույթն իրականացնող մարմինն այն չի ընդունի:

Մեր իրականության մեջ, ինչպես գիտենք, զգալի մաս է կազմում չունևոր և աղքատ խավը: Եվ անգամ եթե ցանկություն կա պաշտպան ունենալու, ապա դրան խանգարում է ոչ բավարար նյութական վիճակը, այսինքն՝ սոցիալական անապահովությունը: Սակայն սա չի կարող պատճառ հանդիսանալ պաշտպանից հրաժարվելուն, քանի որ գոյություն ունի անվճար իրավաբանական օգնության ինստիտուտը՝ հանրային պաշտպանի ինստիտուտը: Ուստի վճարման համար միջոցների բացակայության պատճառով պաշտպանից հրաժարումն ընդունելը կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքի խախտում է: Սակայն ինչպես ցանկացած աշխատանք, այնպես էլ փաստաբանի աշխատանքը ենթակա է վարձատրման «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ փաստաբանական գործունեության վճարի չափն ու կարգը որոշվում է փաստաբանի ու ծառայություն ստանալու դիմած անձի միջև կնքված պայմանագրով: Իսկ անվճար փաստաբանական ծառայությունները ֆինանսավորվում են պետական բյուջեից: Ի վերջո, իրավաբանական օգնությունը պետք է լինի անվճար այն ստացողի, այլ ոչ թե ցուցաբերողի համար: ՀՀ փաստաբանների միությանը պետական բյուջեից փոխհատուցվող գումարի չափը որոշվում է փաստաբանի աշխատանքային մեկ ժամի համար՝ դատախազի աշխատանքային մեկ ժամի վարձատրությանը համարժեք գումարի չափով («Փաստաբանության մասին» ՀՀ օրենք հոդված 6-րդ):

Ինչպես արդեն նշվել է, համաձայն «Փաստաբանության մասին» ՀՀ օրենք 7-րդ հոդվածի՝ փաստաբան է համարվում այն անձը, ով ստացել է համապատասխան փաստաբանական գործունեություն իրականացնելու արտոնագիր, որը տրվում է Փաստաբանների միության կողմից: Միությունը արտոնագիր է տալիս այն անձին, որը՝

1. ունի բարձրագույն իրավաբանական կրթություն (ներառյալ արտոնագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում ստացած կրթությունը),
2. հանձնել է որակավորման քննություն և ստացել համապատասխան վկայագիր:

Փաստաբական միությունների մասին խոսելիս՝ հարկ է նշել, որ այժմ ՀՀ-ում գործում է Փաստաբանների Պալատը: Փաստաբանների Պալատը փաստաբանների մասնագիտական անկախ, ինքնակառավարվող իրավաբանական անձ է: Այն կարող է համագործակցել այլ երկրների փաստաբանական կառույցների, միջազգային և այլ կառույցների հետ, ինչը լուրջ նախադրյալ է ստեղծում փաստաբանական գործունեության արդյունավետության և որակի բարձրացման համար: Փաստաբանների Պալատի մարմինների լիազորությունները, կազմա-

վորման կարգը, գործունեության կարգը, խնդիրներն ու գործառույթները սահմանվում են Փաստաբանների Պալատի կանոնադրությամբ:

Ընդհանրացնելով վերը նշվածը, փաստաբանության ինստիտուտի մասին կարելի է ասել, որ այն քաղաքացիական հասարակության պետության իրավական համակարգի ինստիտուտ է, որն անհրաժեշտ է քաղաքացիներին և կազմակերպություններին որակյալ իրավաբանական օգնություն տրամադրելու համար:

**Փաստաբանությունը արտասահմանյան և ԱՊՀ երկրներում:** Ցանկացած պետությունում փաստաբանությունը որպես իրավական ինստիտուտ կոչված է աջակցելու օրենքներով երաշխավորված իրավունքների և ազատությունների իրավական պաշտպանվածության հզորացմանը: ԱՊՀ մի շարք երկրների փաստաբանական գործունեությունը յուրատիպ և առանձնահատուկ բնույթ ունի:

Հայաստանում և Ադրբեջանում փաստաբանական գործունեության իրավական կարգը սահմանվում է միայն օրենքներով, որոնց մեջ առաջնակարգ են քաղաքացիական դատավարության և քրեական դատավարության օրենսգրքերը:

ՌԴ Փաստաբանների դաշնային պալատը համառուսական ոչ պետական, ոչ առևտրային կազմակերպություն է, որը հիմնված է ՌԴ սուբյեկտների փաստաբանական պալատների պարտադիր անդամության վրա: Փաստաբանների դաշնային պալատը, որպես փաստաբանական կառավարման մարմին, ստեղծված է ՌԴ-ում պետական իշխանության մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում՝ փաստաբանների շահերի ներկայացման և պաշտպանության, փաստաբանական պալատների գործունեության կոորդինացման, փաստաբանների կողմից տրամադրվող իրավաբանական օգնության բարձր մակարդակի ապահովման նպատակներով: Դաշնային օրենքին համապատասխան ՌԴ-ում ստեղծվեցին ՌԴ սուբյեկտների փաստաբանական պալատներ, որոնք կոչված են ապահովելու որակյալ իրավաբանական օգնության տրամադրումը, նրա մատչելիությունը, ՌԴ ողջ տարածքի բնակչության համար: Փաստաբանական գրասենյակն իրավաբանական անձ չէ, բանկերում և այլ վարկային կազմակերպություններում ունի հաշվարկային և այլ հաշիվներ, ինչպես նաև իր անվանումով և ՌԴ համապատասխան սուբյեկտի նշմամբ կնիք, շտամբ և ձևաթուղթ:

Գերմանիայում փաստաբանական գործունեության թույլտվություն ստանում է միայն այն մարդը, որը «Դատարանակազմության մասին» օրենքին համաձայն կարող է իրականացնել դատական պարտականություններ: Փաստաբանների և դատավորների համար սահմանվում են կրթական մակարդակի միևնույն պահանջները: Գերմանիայի Դաշնային Գերագույն դատարանում գործունեության թույլ-

տվություն ունեցող փաստաբանին արգելվում է ցածրադիր որևէ դատարանում փաստաբանական գործունեություն իրականացնել:

Ֆրանսիայում հաստատվեց փաստաբանական մասնագիտության անկախության սկզբունքը, որը ավանդաբար հեղինակավոր տեղ են զբաղեցնում երկրի հասարակական կյանքում: Փաստաբանները Ֆրանսիայում միշտ էլ ավելի մեծ անկախություն ունեն, քան Եվրոպայի այլ երկրներում, ինչն էլ իր հերթին թույլ է տվել ձևավորել ֆրանսիական փաստաբանության հարուստ ավանդույթները: Ֆրանսիայում իրավական օգնության տրամադրումը անվճար և զեղչված իրավաբանական օգնության տրամադրման ոլորտում նման են Հայաստանում առկա խնդիրներին՝ փաստաբանների փոխհատուցումն անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու համար, բավականին համեստ գումար, որը վճարվում է ուշացումով: Փաստաբանի պատասխանատվությունը երաշխավորվում է օրենքով՝ մասնագիտական պատասխանատվության պարտադիր ապահովագրման ձևով: Քաղաքացիաիրավական պատասխանատվությունից փաստաբանը կարող է փաստաբանների ասոցիացիայի կողմից ենթարկվել կարգապահական պատասխանատվության, ինչը ենթադրում է նկատողություն, խիստ նկատողություն, փաստաբանական գործունեությամբ զբաղվելու իրավունքից ժամանակավոր զրկում 3 տարուց ոչ ավելի կամ, որպես ամենածայրահեղ միջոց՝ փաստաբանական ասոցիացիայից հեռացում:

Ղազախստանի Հանրապետության և Ուզբեկստանի Հանրապետության օրենքներում սահմանվում են միայն փաստաբանության՝ որպես իրավական ինստիտուտի նշանակությունը, խնդիրները, որը կարգավորում է փաստաբանական գործունեությամբ զբաղվող անձանց, Ուզբեկստանի Հանրապետության Սահմանադրության համապատասխան ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավաբանական օգնություն ցուցաբերող փաստաբանի, նրանց անկախ կամավոր մասնագիտական միավորումների հարցերը (Ուզբեկստանի Հանրապետության օրենք, հոդված 1-ին): Ղազախստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ այդ ինստիտուտը կոչված է աջակցելու պետության կողմից երաշխավորված և Ղազախստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված մարդու իրավունքների իրացումը՝ իրավունքների ազատությունների դատական պաշտպանության և որակավորված իրավաբանական օգնություն ստանալու ապարեզում:

Ղազախստանում սահմանված է, որ փաստաբանական գործունեության մասին օրենսդրությունը բաղկացած է «Փաստաբանական գործունեության մասին» օրենքից և փաստաբանական գործունեությունը կարգավորող այլ օրենքներից:

Տաջիկստանում իրավաբանական օգնության իրավական հիմքերը, փաստաբանության գործունեությունը կարգավորվում են ինչպես

օրենքներով, այնպես էլ պառլամենտական որոշումներով և հանրապետության նախագահի հրամանագրերով: «Փաստաբանության մասին» օրենքը ստացել է բարձրագույն իրավաբանական ձևը, «Սահմանադրական օրենք»: Դա ԱՊՀ միակ երկիրն է, որ փաստաբանության մասին օրենքին տվել է այդպիսի կարգավիճակ:

## Եզրափակիչ Մաս

Եզրափակելով աշխատանքը պարզ է դառնում, որ իրավական շարժիչ ուժը համարվում է Սահմանադրությունը, որով և կարգավորվում է իրավական և դատական համակարգը: Ուժեղ և կայուն իրավական համակարգ ունենալու միակ երաշխիքը կայացած դատական համակարգ ունենալն է: Դատական բարեփոխումները նախատեսված են ՀՀ Սահմանադրությամբ, որտեղ պաշտպանված են մարդու և քաղաքացու իրավունքները:

Փաստաբանության դերի և նրա հետագա զարգացման համար կարևոր նշանակություն ունեցավ 2005թ. ուժի մեջ մտած «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը: Օրենսդրական բարեփոխումները, ինչպես նաև հասարակական դաշտի փոփոխությունները պետք է հիմք հանդիսանան փաստաբանական ինստիտուտի կայացմանը: Փաստաբանների դերի բարձրացումը կբերի փաստաբանական էթիկայի բարձրացմանը և գիտելիքների ու հմտությունների խորացմանը: Այսպիսով, Հայաստանի Հանրապետության փաստաբանական ինստիտուտի ներդրումը Հայաստանում միտված է պաշտպանելու և վերականգնելու մարդու և քաղաքացու խախտված իրավունքները: Փաստաբանական համակարգի անկաշառ գործունեությունը կնպաստի նրան, որպեսզի ունենանք անկախ փաստաբանական համակարգ, որը և կբերի փաստաբանական ինստիտուտի զարգացմանը և կայացմանը ՀՀ-ում:

Կատարված բարեփոխումները խոսում են այն մասին, որ ՀՀ-ը միշտ գտնվում է իրավական կատարելագործման ճանապարհին: Նա չի ընկրկում, չի վախենում կատարելու նորանոր փորձարկումներ, որպեսզի ապահովի առավել որակյալ և բարձրակարգ փաստաբանական ինստիտուտ: Բազում տարիների ուսումնասիրությունների արդյունքում այսօր արդեն ՀՀ-ը ունի փաստաբանական գործունեությամբ զբաղվող մի շարք հմուտ մասնագետներ, որոնք բարձր են պահում փաստաբանի՝ իբրև իրավաբանի անունը՝ պարտավորեցնելով հարգել ու հաշվի նստել իրենց հետ: Սակայն, չնայած այս ամենին, այնուամենայնիվ փաստաբանական ինստիտուտը դեռ ունի կատարելագործման տեղ, որը պայմանավորված է, մասնավորապես, էթիկայի կանոնների հետ:

## Օգտագործված գրականության ցանկ

*Նորմատիվ իրավական ակտեր*


1. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենք, ընդունված 14.12. 2004թ.:
2. ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրություն, ընդունված 18.02.2006թ.:


*Մասնագիտական գրականություն*


1. Ս. Դիլբանդյան: Փաստաբանական գործունեությունը ՀՀ-ում: Երևան, 2000թ.:
2. Հ. Հ. Ղուկասյան: Պաշտպանի դատավարական վիճակը նախնական փուլում: Երևան, 2001թ.:
3. Ա. Հովսեփյան: Դատախազական հսկողությունը Հայաստանում: Երևան, 2000թ.:
4. Ե. Ռ. Ազարյան: Փաստաբանության հիմունքները: Երևան, 2006թ.:


*Այլ գրականություն*


1. «Օրենք և իրականություն» ամսագրեր, 2006-2007թթ.:

# «ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ. ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ**

«ԼԻԳԼ ԸԼԱՅԸՆՍ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Ստորագրված է տպագրության՝ 25.03. 2010:
Չափսը՝ 60 x 84 1/32: Թուղթը՝ օֆսեթ դ 1: Տառատեսակը՝ «Arial Armenian»: Տպագրությունը՝ օֆսեթ: 3,75 տպ. մամուլ:

---

*ք. Երևան, Նալբանդյան 7, բն.2*
*հեռ. 54-01-99, ֆաքս՝ 58-02-99*
*էլ.փոստ ayla@ayla.am*

**«Գևորգ - Հրայր» ՍՊԸ**

ԼՈՒՍԱԿՆ

հրատարակչությունում

*Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:*
*Հեռ.՝ 52-79-74, 52-79-47:*
*էլ. փոստ lusakn@rambler.ru*